

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՉԱՆՉՈՒՄ

*Լոնդոնից-Փարիզ-Չեյլոն-Լոնդոն...
Ձգվել են ցանցեր,
երկաթե անցք ցանցեր ու ցանցեր
Աժախտում անձի, -
Միջոց սիւս հիմա, ֆաղափից ֆաղափ -
Վառ, կարմիր ցանցեր...
Սեր կամքն է այդպես հզոր շղթայել
Աժախտից համակ...*

Եղիսե Ծարենց, Բռնագեթ թևերը կարմիր գալիփի, 1920, V



Ն Ա Յ Կ Ն Ա Ս Բ Ա Ր Ձ Ո Ւ Մ Յ Ա Ն

Եթե 20-րդ դարասկզբին աշխարհի տարբեր ծայրերում ապրող պրոլետարներին շղթայող կարմիր ցանցը լոկ ուղիղ խորհրդանշող պոետական հնարան էր և արագ փոփոխվող հեղափոխական ժամանակներում միագործ ու միակամք մարդկանց կապող անտեսանելի գաղափարական շղթա, ապա համացանցն այսօր, նույնքան անտեսանելի լինելով, հաղորդակցման, խոսքի ու մտքի տարածման գերհզոր միջոց է: Այն իրապես նույն ժամանակի մեջ կապում է տարբեր ազգությունների, մարդաբանական ու սոցիալական այլ տարբերություններ ունեցող մարդկանց, նրանց դարձնում է ինչպես միասիրտ ու միակամք, ապա խոսքի, այլ թվում և գրական-պոետական, տարածման հնարավորություն է ստեղծում:

Համացանցում գրականություն կարելի է կարդալ էլեկտրոնային գրադարաններում, գրական ամսագրերի ու թերթերի կայքերում, ոչ գրական կայքերի գրական ֆորումներում, առանձին հեղինակների ու թեմատիկ կայքերում և վերջապես, սոցիալական ցանցերում ու բլոգներում: Բնարկե, տեղակայման յուրաքանչյուր վայր ունի իր գործառնությունները, ինչից էլ կախված է տեղադրվող գրականության գործառնականությունը: Երբեմն էլ մեկ կայքում համատեղվում են բոլոր գործառնությունները: Ուսումնասիրության ու հանրային հետաքրքրության տեսանկյունից առավել հետաքրքիր է բլոգներում ստեղծվող կամ տեղադրվող արդի գրականությունը, քանի որ այն ոչ միայն ընթերցվում է, այլև քննարկվում, մեկնաբանվում ու փոփոխվում:

Ցանցային գրականություն կամ ցանցագրականություն հասկացությունն առաջացել է համացանցի զարգացման արդի փուլում՝ մատնանշելու համար գրականության այն տեսակը, որի ստեղծման, տեղայնացման ու տարածման հիմնական միջավայրը համացանցն էր: Նոր միջավայրը և տարածման միջոցները բազում առավելություններ ունեն տպագրված տեքստերի նկատմամբ:

Հասանելիություն բոլորին ամբողջ ժամանակ ու աշխարհի բոլոր մասերում

Տեքստերի, դրանց առանձին հատվածների հեշտ փնտրման ու օգտագործման հնարավորություն

Հղումների միջոցով դիպաշարի զարգացման ու տեքստի մեկնաբանության հնարավորություն

Գրական տեքստերը՝ երաժշտությանը, վիդեոն և անիմացիոն պատկերներով լրացնելու հնարավորություն

Անմիջական, ընթերցող-գրող ինտերակտիվ շփման հնարավորություն և այլն:

Գրող-ընթերցող-տեքստ անմիջական հաղորդակցումը, կարծիքների ու մեկնաբանությունների փոխանակումն էլ՝ թերևս համացանցային գրականության հիմնական առավելություններից է: Այն հնարավորություն է ստեղծում տպագրությունից առաջ, ըստ հնարավոր ապագա ընթերցողների վերաբերմունքի, փոփոխել ու մշակման ենթարկել գրական տեքստը, եթե, ի-

հարկե, կա այդպիսի անհրաժեշտություն: Նախկինում գրողները չունեին այս հնարավորությունը և միայն տպագրությունից հետո կարելի էր ճշտել հանրության վերաբերմունքը: Ցանցային գրականությունը և հեղինակ-ընթերցող միասնական աշխատանքը միաժամանակ հիմնավորելու են գալիս պոստմոդեռնիստական մեկ հեղինակի մահվան և բազմաթիվ հեղինակների առկայության թեզիսը:

Այս առավելություններով հանդերձ, կան իհարկե նաև բացասական հետևանքներ: Գրականության գոյության նոր միջավայրը պատկերումն ունի տարածք չէ: Արտաբնական չեզոքության մեջ հանդերձ, համացանցն իր մեջ գտնվող ամեն ինչի՝ մարդ, պատկեր, երաժշտություն, գրական տեքստ, իր պայմաններն ու պահանջներն է առաջադրում, հաստատում խաղի սեփական կանոնները, որոնք էլ ի վերջո, համացանցում տեղադրված նյութը, անկախ գեղագիտական կամ այլ չափանիշներից, վերածում են լոկ ինֆորմացիայի:

Համացանցն ունի իր գործառնություններն ու նպատակները, որոնց մեջ գեղագիտական չափանիշները հաշվարկված չեն: Համացանցի հիմնական գործառնությունը՝ ինֆորմացիայի արագ ընդունումը, ապա արագ ու մատչելի տարածումն է: Ուշագրավ է, որ ի թիվս քարոզչական-գաղափարական խնդիրների, նման գործառնություններն ունեն նաև 20-րդ դարասկզբին ստեղծվող ագիտակաները, որոնց սկզբունքներով են ստեղծվել նաև չարենցյան «Ռադիոպոետները»:

Եթե համացանցում տեղադրված գրականության դասական գործերը, բացի տեսողական-արտաքին լրացումները, փոփոխություններ չեն կրում, ապա նոր ստեղծվող գրականությունը ենթարկվում է միջավայրի ձևավորմանը, արագ ընթերցվելու պահանջներին համապատասխան որոշակի ծավալներ ստանում և այլն: Գրականությունն անկատար սկսում է փոխվել, ժանրային նոր գերակայություններ են առաջանում, այն սկսում է հարմարվել նոր միջավայրին՝ հայտնվում համացանցի ցանցերում:

Ժանրային տեսանկյունից շահեկան են առանձին պատկերները, փոքր էսսեները, որոնք տեղավորվում են համակարգի էկրանի սահմաններում և ընթերցվում են առանց ուղղահայաց թերթման: Համացանցը լիովին համապատասխանում է ժամանակակից մարդու գերարագ կյանքին: Կյանք, որի պահանջներով արվեստը, ապա նրանից ծնվող գեղագիտական հաճույքը լոկ արագ հաջորդվող, հերթական ինֆորմացիա են:

Ցանցային գրականության ստեղծման և տարածման առաջամարտիկները գրողական անհատական կայքերը և բլոգներն են: Մրանք առանձին կայքեր կամ էջեր են, որոնք կարող է ստեղծել ամեն մարդ ու տեղադրել այնտեղ ինչ ցանկանում է:

Հայկական համացանցային, նաև բլոգային իրականությունը նոր է զարգանում, սակայն առաջ է գնում մեծ քայլերով: Ի մասնավորի, 2009 թվականը նշանավորվեց հայկական բլոգային բուռնությամբ: Բազում թեմատիկ բլոգների շարքում մեծաթիվ են նաև գրականության ու արվեստի հետ կապված բլոգները՝ armenian-poetry, inqoagir, ankakh, blansh's blog և հեղինակային բազմաթիվ այլ բլոգներ: Այս բլոգների շարքում իր անընդհատ քարոզչականությանը ու հաճախում-

ների մեծ ծավալներով առանձնանում է «Գրանիշ» գրական բլոգը: Գործունեության մի քանի ամիսների ընթացքում բանաստեղծ Կարեն Անտաշյանի աչառու ու ակնառու դեկավարության մեջ ու մասնակցության մեջ բլոգում ակտիվ քննարկումներ ու բանավեճեր են ծավալվում: Բացի այս, «Գրանիշի» շնորհիվ սոցիալական ցանցերում՝ Odnoklassniki-ում ու Facebook-ում տարերայնորեն տարածվող, ցարցարկի գրական տեքստերն ու քննարկումները տեղափոխվեցին նոր ու հարմար դաշտ:

Միաժամանակ «Գրանիշում» վերհիշեցին հայ ու օտարազգի դասականներին, որոնց շուրջ էլ մտքերի արդյունավետ փոխանակումներ եղան: Գնահատելի է նաև բլոգում գրականագիտական-քննադատական էջերի ու հոդվածների առկայությունը, ինչը թույլ է տալիս ազատ ու անկաշկանդ մեկնաբանությունների կողմից գիտական վերլուծություններ տեսնել: Այս դեպքում գրող-տեքստ-ընթերցող շղթային միանում է նաև գրքագիր չորրորդ կողմը՝ քննադատը, և հաղորդակցումն առավել ամբողջական է դառնում:

Այս ամենով հանդերձ, բլոգում խնդիրներ նույնպես կան: Նախ անհանգստացնում է համահարթեցումը: Հաճախ թեմատիկ բաժիններում կողք-կողքի են դրվում դասական ու սկսնակ հեղինակներ, էսսեներ ու գիտական տեքստեր: Մրան համապատասխան տարասեռ են մեկնաբանություններն ու գնահատականները՝ պարզունակ կենացներից մինչև ընդգծված գիտական վերլուծությունները: Սա թերևս ոչ թե բացթողման, այլ միտման արդյունք է և նպատակ ունի վերագնահատել դասական արժեքները և դրանք նոր հեղինակներին ու երիտասարդ ընթերցողներին ծանոթ դարձնել: Մյուս կողմից՝ ինչպես «Գրանիշում», այնպես էլ գրողների կողմից դեկավարվող այլ բլոգներում անխուսափելիորեն մեծ տեղ են գրավում տրյեյկ-տիվ մոտեցումները, ինչի հետևանքով մեկ կամ մի քանի հեղինակների շուրջ են պտտվում քննարկումները, դուրս են մղվում որոշ նյութեր և ինչն ամենատեսալի է՝ ջնջվում են բլոգի պատասխանատուին ինչ-որ պատճառով անցանկալի մեկնաբանությունները և այլն: Այդուհանդերձ, սրանք թերևս ինքնակարգավորող հարցեր են և գնահատելի են բլոգի դեկավարի ջանքերը գրականությունը պոստպոստմոդեռնիստ մասսայականացնելու գործում:

Բացի այս կարելի է նշել, որ և «Գրանիշը» և հայկական գրական ցանցի մյուս բլոգներն ու կայքերը առայժմ չեն համապատասխանում ցանցային գրականության հիմնական պահանջներից մեկին՝ էքսկլյուզիվությանը: Կայքերում տեղադրվող ստեղծագործությունները, գրեթե առանց բացառության, արդեն տպագրված են: Այս դեպքում մասամբ հնացած են լի-

նում նաև մեկնաբանությունները:

Գրական բլոգների ու քննարկումների ամբողջ բազմազանությամբ հանդերձ, պետք է արձանագրել հայկական ցանցային գրական ընթացքի տարերայնությունը: Հայ գրողներ դեռևս նոր են նվաճում վիրտուալ իրականությունը և չեն օգտվում համացանցի ընձեռած հնարավորություններից: Ծավալվող քննարկումները հաճախ միակողմանի հայտարարությունների են վերածվում, քանի որ հեղինակն իր պատվից ցածր է համարում պատասխանել ընթերցողների մեկնաբանություններին: Բացի այս, հեղինակներն ընդհանրապես չեն օգտվում ցանցային տեքստի գլխավոր առավելությունից՝ հղումներ տեղադրելու հնարավորությունից: Յուրաքանչյուր հղում իմաստային, ենթատեքստային կապ է ստեղծում ընթերցվող տեքստի և այլ՝ ինչ-որ բանով այդ տեքստին մոտիկ կամ նման հազարավոր այլ տեքստերի հետ: Այս դեպքում նման հղումների միջոցով ընթերցողը միաժամանակ կարող է ծանոթանալ այլ հարակից տեքստերի հետ: Այս երևույթը ուղղակիորեն կապվում է ինտերտեքստուալության հետ. «Տեքստը՝ արձագանքների սեյսլակ է»- գրում է Ռ. Բարտը՝ մեկնելու համար գրական ինտերտեքստուալությունը: Նույն կերպ Բախտինը գրականության զարգացումը բնութագրում էր որպես տարբեր տեքստերի միջև անընդհատական երկխոսություն:

Համացանցը այդ երկխոսության ապահովման լավագույն միջոցն է: Մնում է միայն օգտագործել ընձեռնված հնարավորությունը, պահպանել ստեղծված էլեկտրոնային կապերը:

Անկախ ամեն ինչից հայկական գրական ցանցն արդեն որոշ նվաճումներ արձանագրել է: Համացանցի գրական էջերը թույլ տվեցին դիտարկել ընթերցասեր հասարակության ակտիվությունը, ճաշակը, մտավոր ունակություններն ու մի շարք այլ հատկանիշներ, որոնք չափվում են քննարկումներին մասնակցության հաճախականությամբ ու մեկնաբանությունների որակով: Հայ արդի գրականությունը «Գրանիշում» և մյուս էջերում ցույց տվեց իր դեմքը, այսինքն՝ անուններ ու դեմքեր հայտնվեցին: Մյուս կողմից՝ Երևացին նաև ժամանակակից գրականության փոքրաթիվ ընթերցողները: Առաջին անգամ դեմ առ դեմ, նույն դաշտում հանդիպեցին գրողների միության միջանցքներում, փոքրաթիվ գրադարաններում ու գրախանութներում միմյանց փնտրող միջին վիճակագրական հայի կողմից վաղուց մահացած համարվող կողմերը:

Հաշվի առնելով բոլոր առավելություններն ու թերությունները, մնում է միայն գրասեր հանրությանը հորդորել արագ զինվել կապի նորագույն միջոցներով, ինտեգրվել գրական ցանցին, սակայն պահպանել զգոնությունը՝ ցանցերում հեշտ է նաև խճճվելը:

Ես հոգնած էի ու չկարողացա փշաքաղվել: Փնտրեցի ինչ-որ հարմարանք: Գտա: Պարզ-վեց արքո է:

Չախ կողմում վառվող գազօջախ կա: Գազօջախի վրա կաթսան է: Կաթսայի մեջ՝ շերեփը: Ինչ-որ ձախ ձեռք խառնում է կաթսայի պարունակությունը, իսկ աջը գրպանում է: Երկմտելու կարիք չկար. նա է: Շոշափեցի: Ես էի՝ նորից արքոն նստած:

Ճաշեցիք: Ընթացքում անձեռոցիկը ճմրթվեց, հյութը թափվեց սփռոցին, բաժակը կտրվեց ու ապակին կտրեց մասսու: Վերջում մոռացվեց ու մոռացանք խոսել:

Գուլպայի թելը կարմիր է, փափուկ, բայց քիչ: Երևի վերջում ստիպված լինեմք սև թել ավելացնել: Ես նստեցի գետնին՝ կծիկը պահելով ափերիս մեջ: Այսպես նրան ավելի հետաքրքիր կլինի գործել: Նա դիտմամբ կտրուկ կքաշի թելը՝ իբր կծիկը քանդելու համար: Շարժումը կփոխանցվի կծիկին: Կծիկը խուտուտ կտա: Ափերիս միջով խուտուտը կբարձրանա վերև՝ արմունկներով, ուտերով, պարանոցով, ու ես կժպտամ:

Սովորաբար նա ավելի արագ է գործում, քան ես. հատկապես երաժշտության ներքո: Հարկավոր է ուղղակի որսով ռիթմը, և աշխատանքն ավելի արդյունավետ կլինի:

- ...
- Ի՞նչ: Չլսեցի: Կրկնիր:
- Տխուր եմ,- ասաց նա:
- Կարող ես պարել:

Նա հենց սկզբից չկարողացավ զգալ երաժշտության ռիթմը ու սկսեց անկանոն շարժվել: Օրորվում էր հարբածի պես: Թափափված մի շարժումով մոտեցավ ինձ ու տարավ պարելու: Այժմ երկուսով էինք օրորվում: Չեռերս դրեցի նրա կոնքերին ու զգացի մարմնի գոլորտները: Երևի նա էլ նույնը զգաց: Մենք սովորաբար ջինսե տաբատներ ենք հագնում, որոնք լայն են ու կոնքերից ներքև:

- Ուզում եմ, որ համբուրես ինձ,- ասաց նա:
- Դա ասվեց այն պահին, երբ արդեն սեղանին էինք: Մոտեցա, որ համբուրեմ շուրթերը:
- Ո՛չ, չեմ ուզում այդպես: Մի տեսակ ամաչում եմ: Ծունկս համբուրիր,- ու ցույց տվեց աջ ծունկը:
- Դու ստիպված կլինես հանել տարատիղ աջ փողքը:
- Նա ժպտաց: Մի քանի կտրուկ շարժումով պատռեց ջինսը, ու ես համբուրեցի: Այսպիսով՝ մենք էականորեն տարբերվում ենք...
- Արդեն ոչ: Նա հենց նոր պատռեց և իմ տաբատը:

Անձայն ժամացույցը հյուսիսային պատին էր: Ժամացույցը նաև հնարած էր ու անտեսված: Ինչ վերաբերում է պատին, ապա այն դեղնականաչավուն է: Այսինքն՝ ոչ դեղին, ոչ կանաչ: Ուզում եմ ասել դեղին է, ուղղակի տեղ-տեղ խոնավությունից կանաչել է՝ հատկապես առաստաղի մոտ:

- Մենյակները հավաքե՞լ ես:
- Այո,- ասաց նա:
- Բոլոր՞րը:
- Գլխով դրական շարժում արեց:
- Վստա՞հ ես:
- Չպատասխանեց:
- Դա այն պահն էր, երբ պատուհանից դուրս նայեցիք, բայց մտք էր, ու ոչինչ չերևաց: Ցուցադրաբար հորանջեցի՞նք՝ միմյանց հուշելու, որ քնելու ժամանակն է:
- Մենյակի պատին ամրացված դարակները լայն են: Կարելի է ասել՝ նաև փոշոտ, ծանրաբեռնված միատեսակ իրերով:
- Այստեղ չես հավաքել,- իրար ետևից իրերը նետեցի հատակին,- երևի մոռացել ես:
- Նա մայեց ուղիղ աչքերիս մեջ: Երևի բարկացավ: Ես ուշադրություն չդարձրի:
- Ուզում եմ քնել: Անջատիր լույսը:

Երբ պատկեցի, նա անջատեց լույսն ու մոտեցավ ինձ: Մութ էր, չկարողացա կռահել ու կանխել նրա գործողությունները: Նա գեր չէր, բայց համենայնդեպ ծանր էր ինձ համար: Ես դա ավելի սուր զգացի, երբ պատկեց ինձ վրա:

Խնդրեցի նրան տեղափոխվել.
- Վեր կաց, մազերդ խանգարում են շնչել: Իսկ քիակներդ ոսկորները ցավեցնում են մարմինս: Այսպես երկար չեմ դիմանա: Բայց նա վաղուց հարմար տեղավորվել էր: Չեռերը խաչել էր կրծքին, հայացքը ուղղել առաստաղին: Եվ այսպես մինչև այն պահը, երբ դրսից լսվեց շների ոռնոցն ու զարթուցիչի

- ... - Չգիտեմ



Լ Ի Լ Ի Թ Կ Ա Ր Ա Պ Ե Տ Յ Ա Ն

փոխարեն հիշեցրեց լուսաբացի մասին: Մյուս պատը հարավային կողմում էր: Նրան մայելը մի փոքր անհետաքրքիր էր: Ի տարբերություն նախորդի՝ վրան ժամացույց կամ բորբոսի հետքեր չկային: Ընդամենը մի քիչ ճաքճքված էր, ոտքերով գետնին խփելիս ցնցվում էր:
- Հիշո՞ւմ ես, երեկ ես դասավորել էի բոլոր դարակները,- ասաց նա,- իսկ դու թափեցիր:
- Հիշում եմ:
- Այսպիսով՝ ես որոշեցի:

Նա բռնեց մազերս ու տարավ հայելու մոտ: Հայելին անդրադարձրեց մեր պատկերները: Մենք գեղեցիկ չենք և նման ենք միմյանց: Հետո հայելին անդրադարձրեց հատակին փունջ-փունջ ընկնող մազերը անկանոն, անհավասար կտրված:

Հարցրի. «Մազերս խուզե՞լ ես»:
Ասաց. «Ո՛չ, միայն կկտրեմ»:
Հայելին անդրադարձրեց իմ այլայլված դեմքը, բայց ցավը չկարողացավ արտացոլել: Մենք սովորաբար մոռանում էինք, բացի այդ՝ չէինք կարող ենթադրել կամ առավել ևս հանդուրժել օտար մեկի ներկայությունը: Իսկ ժամանակը հիշեցրեց, որ ժամանակն է հիշել իր գոյության մասին: Հյուսիսային պատի ժամացույցի միջից անձանոթ կենդանի դուրս եկավ ու ասաց.

- Կո՛ւ-կո՛ւ:
- Չարմացանք: Մինչ այդ նրան չէինք տեսել:
- Կո՛ւ-կո՛ւ:
- Ո՛չ գազան էր, ո՛չ սողուն, ո՛չ կաթնասուն, ի-միջիայլոց, սկյուռիկ էլ չէր:
- Կո՛ւ-կո՛ւ:
- Երկու ոտք, մի գլուխ, երկու թև...
- Կո՛ւ-կո՛ւ:
- Բազե՞: Ո՛չ: Ծիծեռնա՞կ: Ո՛չ: Համենայնդեպս, ոչ էլ արծիվ կամ թութակ:
- Կո՛ւ-կո՛ւ,- ասաց թռչունն ու մտավ իր բույնը:

Թռչունը չէր կարող և չպետք է խանգարեր մեր առօրյա հանգիստը: Նախկին անդրորը վերականգնելու պատրվակով առաջարկեցի կտրել նրա մազերը:
- Ձբաղված եմ: Քո պատճառով գուլպան կիսատ եմ թողել,- ասաց նա:

Դա ինձ չի խանգարում: Շարունակիր գործել, միայն գլուխդ շատ չշարժես: Մազերը փունջ-փունջ ընկան բազմոցի հենակին, նրա ուտերին, երբեմն՝ կծիկի վրա: Խառնվեցին կարմիր թելի հետ ու դարձան գործվածքի բաղկացուցիչ մասը:

Սանրվածքն իր վարպետությամբ աչքի չէր ընկնում, բայց ես գոհ էի: Երբ վերջացրել էի, ասաց.
- Ոտքիս եղունգներն էլ կտրիր:
Մի փոքր անհանգստացա: Ուրիշի եղունգներ կտրեմ այնքան էլ հեշտ գործ չէ: Ինձ առաջին անգամ էին նման խնդրանքով դիմում: Վերջապես, ես սովոր էի միայն իմ եղունգները կտրել: Մի քանի դիրքեր փորձեցի: Վերջում որոշվեց, որ ոտքը դնի գոգիս: Այս դիրքը երկուսիս էլ հարմար էր:

- Կո՛ւ-կո՛ւ:
- Թռչունը խանգարում էր՝ շեղում ուշադրությունս:
- Կո՛ւ-կո՛ւ:
- Ես ավելի նյարդային դարձա: Ակամա հայցքս ուղղում էի ժամացույցին:
- Կո՛ւ-կո՛ւ:
- Սկրատը դողաց: Եղունգը խորը կտրելով՝ վնասեցի ճկույթը:
- Նա ճչաց:
- Լսվեց.
- Կո՛ւ-կո՛ւ:

Եկավ գիշերը: Նույնիսկ ժամն էմ հիշում՝ 1:44: Սպասումի ուժից չէինք կարողանում քնել: Պարբերաբար լսվող «կու-կու»-ն խախտել էր գիշերային լռությունն ու մեր ապահովագրված անդորրը: Այլևս չէինք կարող համարժեցել:
Որոշեցինք մտնել մահճակալի տակ ու սպասել լուսաբացին: Նա թաքնվել էր իմ ետևում և ասում էր, որ ուղիղ նշան բռնեմ բնին, ու կրակելիս աչքերս հանկարծ չփակեմ:

- Թռչունը չկար.
- Երևի վախեցրել ենք,- ասացի:
- Նա մեզնից չի վախենում:
- Ուրեմն քնած է:
- Հնարավոր է: Այդքան «կու-կու» ասելուց ուժասպառ է եղել,- հետո հանարձակի շարունակեց,- որոշել եմ, ես եմ կրակելու: Հաստատ: Չհակառակվես: Ասում եմ, ուրեմն այդպես պիտի լինի:
- Տեղերով փոխվեցինք: Նա մի կերպ եկավ առաջ, ես թաքնվեցի թիկունքում:
- Հիշում ես, չէ՞, որոշել ենք վիրավորել, բայց ոչ սպանել:
- Հիշում եմ,- ասաց նա:
- Կրկնիր:
- ...
- Ավելի արագ:
- ...

Նա ինձ չհամոզեց:
Թռչունը բնից դուրս եկավ: Երկուսով քաղցանք:
- Կո՛ւ-կո՛ւ:
Շունչներս պահեցինք:
- Կո՛ւ...
Կրակեց: Դիպուկ էր: Թռչունն ընկավ: Իրար հրելով ու աքացի տալով՝ մի կերպ դուրս եկանք մահճակալի տակից:

Մատկել էր: Փամփուշտը հանել էր թռչունի աջ աչքը: Հենվեցի արևմտյան պատին ու լաց եղա:

Արևմտյան պատը երևի նույն շարվածքն ուներ, ինչ մյուսները: Վստահ չեմ կարող ասել՝ պատն այնքան քանդված չէր, որ համեմատեի: Այնպիսի զգացողություն ունեի՝ մյուսներից ավելի երկար է, հաստ ու ամուր, հետևաբար՝ ավելի ճնշող: Կարծես առաստաղն այս կողմում ավելի ցածր էր:

Մրջյունի՝ արևմտյան պատը բարձրանալու պահին նախաճաշը վերջացրել էինք: Երբ մրջյունին հաջողվեց, հավաքում էինք սեղանը, իսկ պատի կեսն անցնելու ժամանակ ես մի կողմ դրեցի գուլպան ու ասացի.
- Հիշո՞ւմ ես, ես ասել էի՝ «Վիրավորել, բայց ոչ սպանել»:
- Հիշում եմ:

- Ինչո՞ւ սպանեցիր: Պատասխանիր:
- Հեռու գնա,- թեթևակի մի կողմ հրեց:

Ես պատակեցի նրան: Պատասխանը չուշացավ: Հետո քաշքշեցինք միմյանց ու ընկանք հատակին: Նրա հարվածները ծանր էին ու ցավեցնող: Ամեն անգամ ամբողջ մարմնով ցնցվում էի: Ես, հակառակը, ավելի հաճախ էի հարվածում, թեթև ու ոչ արդյունավետ:

Մրջյունը առաստաղի կենտրոնում էր: Այժմ արդեն հակառակորդի փորին էինք խփում: Նա՝ ավելի ու ավելի ուժգին, ես՝ արագ: Մեզնից մեկը կարող էր ծննդաբերել: Նա դրա բոլոր իրավունքներն ու հնարավորություններն ուներ: Վերջիվերջո, նա չդիմա-ցավ ճնշմանն ու ասաց.

- Բավական է:
- Որովիետես, չնայած ես ուժեղ չեմ, բայց ավելի հետևողական եմ ու աշխատասեր:
- Երկու ուժասպառ մարմիններից մեկը (դա իմն էր) նետվեց դեպի բազկաբոլոր, մյուսը՝ մնաց նույն տեղում ընկած:

Լռություն էր: Աստիճանաբար լսելի դարձավ նրա ծանր շնչառությունը: Հետո շնչառության ձայնը կամաց-կամաց հեռացավ: Դռան շխուկից հետո նորից լսվեց՝ խառնված ջրի խշշոցին:

Ես գլուխս հագիվ բաժրացրի բազկաբոլորի հենակին ու բացեցի աչքերս: Նա հատակին չէր: Մտովի վերականգնեցի գործողությունների հերթականությունը:
Նա սողալով հասել էր լոգարան, կողպել դուռն ու բացել ջրի ծորակը: Երևի մարմնին սառը թրջոցներ դնելու համար: Լոգարանից ինչ-որ թրմփոց լսվեց: Մոտեցա դռանը: Ասացի, որ այժմ թրջոց դնելու իմ հերթն է, բայց պատասխան չեղավ: Ես նրան չէի տեսնում, բայց ծանր շնչառությունը ներքևից էր լսվում: Այնպիսի զգացողություն ունեի, որ ընկած է հատակին:

Խնդրեցի բացել դուռը: Ես կարող էի օգնել նրան:
- Ո՛չ,- հագիվ լսելի ձայնով ասաց նա,- չեմ կարող:
Ես ամբողջ ուժով բախեցի դուռը: Դուռն ամուր էր, ուժերս՝ սպառված: Հանկարծ նա ասաց.

- Ես մերկ եմ, ամաչում եմ:
- Աչքերս կփակեմ, միայն բացիր:
- Արդեն ճանաչում էի նրան:
- Նա այլևս ոչինչ չասաց, ու ես ոչինչ չէի կարող անել:
- Հյուսիսային պատին ժամացույցն է: Հարավային պատը ճաքճքված է, արևմտյանը՝ երկար, հաստ ու ճնշող:
- Ես կտրեցի երակներս: Արյան մի քանի կաթիլ քավեց արևելյան պատին: Արևելյան պատը շագանակագույն դուռ ուներ, դուռը՝ պողպատյա բռնակ:
- Իսկ ինչու ոչ, կարելի է և սենյակից դուրս գալ:
- Արյունը կաթ-կաթ ծորում էր, ու լսվում էր նրա ծանր շնչառությունը:
- Երբ դուրս եկա, ես դեռ չէի որոշել՝ ինչ էի անելու:

Մարդը վաղուց հեռացել է բնակարանային իր համար սոցիալական ու հակաբնական հասարակություն ստեղծելով: Երևույթը ժամանակակից հայացքի ներքին հիստորիան է՝ դարձել է դառնում, որ ժամանակակից հասարակությունը գտնվում է դեղի այլ սարածության ու իրականության անցման շեղմին: Արժե սվայալ դարազայում խոսել «սոցիալական ճգնաժամի» մասին, իսկ միգրացիոն արդեն սխալ է «սոցիալական» բառի գործածումը, միգրացիոն դա ոչ թե ճգնաժամ է, այլ հակառակը՝ առաջընթաց է և բարգավաճում: Մենք դարձապես կան չենք հասկանում այն, ինչ կատարվում է մեզ հետ, կամ մեր գիտակցությունն է դեռևս անկասար, և մենք մտածում ենք նեղ ու սահմանափակ: Իսկ մտածում ենք մենք սովորաբար որդես օգտվող:

Մարդկային առաջընթացը ցույց է տալիս, որ ժամանակի փոփոխմանը զուգահեռ, փոխվում է ոչ միայն սարածությունը, այլ նաև՝ արժեքները, հայացքները, դրույթները: Ինչ-որ առանձին իրեր փոփոխվել են միմյանց նկատմամբ իրենց դասավորությունը, բայց հենց ինքը՝ իրը, անփոփոխ է մնացել: Փոխվել են կրոնի նկատմամբ հայացքները, բայց հավասար երբեք փոփոխության չի ենթարկվել: Միջև նույնն է նրա էությունը: Բայց արդյո՞ք ո՞րն է բարձրագույն արժեքը: Բարոյականությունը, կրոնն ու փիլիսոփայությունը երբեք էլ բարձրագույն արժեքներ չեն եղել, նրանք ընդամենը միջոց են՝ ինչ-որ բան հաստատելու և իրականացնելու, բայց հաճախ միջոցների դեր կատարելով՝ հենց իրենք են ընկալվում ու հաստատվում որդես «բարձրագույն արժեք»: Այստիպ, բարձրագույն արժեքները երբեք չեն փոփոխվում, դրանք միշտ վերագնահատվում են: Ինչպես որ դաստիարակությունը չի կարող միանգամից ինֆորմացիոն ընթացք ձեռք բերել, այնպես էլ բարձրագույն արժեքների հաստատումը միանգամից չի կատարվում:

Նիցեիսի «Գերմարդուն»՝ բարձրագույն կամֆի աստիճանը, որը ձգտում է իբխանության: Գերմարդը մարդկային սեռային բարձրագույն խոսքային աստիճանն է, որը, ինչպես և աներկբա իբխանության ձգտումը, սարքեր աստիճաններում սկսում է իբխել մարդկային գիտակցությանը՝ նրան մասնակից դարձնելով իրականությանը առհասարակ: Այդտիպով, իբխանության ձգտումը՝ որդես ճշմարիտ «իրական» ձգտում, նրան մոտեցնում է գոյությանն ու կյանքին: Գերմարդը դարձապես իր հետևում է թողնում նախկին արժեքային համակարգով մարդուն, «անցնում» նրա վրայով՝ ամեն սեռային իրավունքների միջոցով արդարացում փնտրելով, մարդ իբխանության գերակայության աստիճանում ամեն սեռային արժեքներ ներդնելով: Նիցեիսի իբխողների գիտաբանական գերակայությունը համարում է ցանկալի, նույնիսկ՝ անհրաժեշտ, իսկ բարոյականությունը՝ խեղճ, խղճահարական:

Ֆրիդրիխ Նիցեիսի հաճախ էր լինում Մյունխենի ֆադաֆի Կարոլինադաշտ, համար 5 սանը, որտեղ հանդիպում էին բոլոր նրանք, ովքեր անուն ու դիրք ունեին հասարակության մեջ: Ավելի ուշ այստեղ կսկսվեին այցելել և Արդիֆ Հիսլերը: Ինչ անհայտ է, թե արդյո՞ք նրանք հանդիպել են այդ սանը, սակայն ակնհայտ փաստ է, որ նացիստները որդեգրել էին ռասայական գաղափարախոսության կանխադրյալները, որոնք ամառվել արամասական բնույթ սկսեցին կրել հենց Նիցեիսի փիլիսոփայի միջոցով: Հիսլերն իրեն հռչակեց ամենագլխավոր մարտիկ՝ բարոյադես ու ֆիզիկադես գերմանական ժողովուրդը աղոթության ենթարկողների դեմ դայաբար: Նա կյանքի կոչվեց՝ որդես գերմանացիների ազատագրիչ: Բայց ինչի՞ց էր ազատագրում նա գեր-

մանացիներին: Հիցեիսի ֆալսիստերի մասին կիևոնկարները՝ Վիկտորի «Ասվածների մահը», Բերտոլտ Կեռնի «Կոնֆորմիստ», Կավանի «Գիտերային բարադանը», Պազոլինի «Մալոն կամ Մոդոնի 120 օրերը»: Այս բոլոր ֆիլմերը այս կամ այն կերպ մեզ բերում են այն համոզվածությանը, որ ֆալսիստը, ըստ էության, ոչ այլ ինչ է, քան սեփական ամենաթողություն, սեռական անհագորություն:

Իսկ կար ժամանակ, որ սեփական ամենաթողությունը՝ նման, ասեմ, խելագարության կամ չհավորության՝ մարդկանց մեկուսացնում էին հասարակությունից: Ընդ որում՝ մինչև 19-րդ դար: Ընդամենը 19-րդ դարի սկզբին Ռուս-Կոլարը մտադրվում է վարել Մադին Շարսոնի հոստիսայից: Ռուս-Կոլարը ցանկանում էր աղագուցել, որ Մադը իրականում խելագարության ախտահիցներով չի առա-

ություններ՝ որոշակիացնելով ժամանակակից աբխարիի երազանքները: Միֆոլոգիան մասնակցում է աբխարիստեղծմանը: Եթե վճռորոշ համարենք այն փաստը, որ հասարակության մեջ մարդն ամեն որդես ընկղմվում է կեղծ բնականության մեջ, այդ դեղում միֆոլոգի գործառույթը ողբ է լինի՝ բախցնել ամենամեղ զարբի սակ ամենադարձ կյանքային հարաբերությունները: Սա Ռուլան Բարի կարծիքն է, որն իր ժամանակին առանձնացրեց «հակաբնականը» բնականից և գծագրեց «կեղծ բնականի» անցման ճանադարը: Այսինքն՝ «կեղծ բնականությունից բնականության» անցումը սիմուլյակության էսադի հայտնություն է, սեռմին, որն առաջադրվել է Շան Բորդիարի կողմից: Բայց ե՞րբ է կատարվել հակաբնականության բաժանումը բնականությունից: Հնարավոր է, որ դա դասահել է հենց դրախում, երբ

բացնել մարդկանց: Միգուցե դա նրա սխալն էր, բայց նա խոստացավ: Տադանից դուրս գալուց հետո Նոյը գրադվեց գիներգործությամբ: Պատմությունից սեղեկանում ենք, որ երբ մի անգամ Նոյը հարբած էր իր հյուրակում, Հաբեթը «սեսավ նրա մերկությունը»: Ուշադրություն դարձրեք, որ ոչ միայն Հաբեթի «սեսնելն» է մեղք համարվում, այլ նաև Նոյի հարբածությունը: Հնարավոր է, որ մեղքը ոչ այլ ինչ է, քան ոչ արտ կամ անկասարություն: Կասարյալ է աբխարի, բայց անկասար են մարդկային արարները: Եվ հենց այստեղ դարձ է դառնում հակաբնականությունից բնականության բաժանման՝ անբնականից բնականի անցման հաջորդ փուլը: Այլ կերպ ասած, *հսկա* և *սև* մասնիկները համահավասար են: Ինչպես, ամեն դեղում, հիմնական սարանջասման մեջ արահայտվում են «մեղագործության» կամ «արահի» հակադրությունները, իսկ դա նշանակում է, որ ամեն դեղում մենք գործ ունենք միֆերի հետ:

Իսկ ինչպիսին էր մեղքի դերը հին Հռոմում: Մինչ մեր թվարկությունից առաջ յոթերորդ դարի առաջին ֆառորը, Մեմոնիդ Ամերգոնացին տուր սալով իր զգացմունքներին՝ մի ընդարձակ լիբիկական բանաստեղծության միջոցով, որը հասել է մինչ մեր օրերը, արահայտել և հիմնավորել է իր համոզմունքները կնոջ ֆիզիկական և բարոյական թերությունների մասին զարմանալի դարձությամբ և մեծ բացահայտումներով: Բանաստեղծը հաստատում է, որ 10 կնոջից 9-ը ոչ մի բանի ողիսանի չէ և փորձում է դա բացահայտել նրանց ծագմամբ: Փնթի-կինը ծագել է խոզից, ծայրահեղ խորամանկ կինը՝ աղվեսից, հեսարբասեր կինը՝ շներից, անուղեղ, ոչ մի բան չիմացող կինը, որ միայն ուտելիքի մասին է մտածում՝ անհմաստ հողից: Կամակոր և չհասկացող կինը նման է հավերժ անհանգիստ ծովին, որի վրա անհնար է հենարան գտնել: Ծույլ կնոջ նախածնողների մեջ երևում է ավանակը, իսկ հիշատակները կասում: Նա, որը հագուստի և զարդերի նկատմամբ մեծ սեր ունի, մեծադես ինչ-որ նորաձև իր փնտրում է մեջ է, առաջացել է ձիուց, իսկ վերջինը՝ սգեղը՝ կառիկից: Կանացի մեղքերի թվարկումից հետո, որը 80 տղ է կազմում, ընդամենը 9 տղ նվիրվում է հավասարիմ կնոջ, աբխասասեր սեստուիու և մոր գովաբանությանը, որը իր ծագումը ստացել է մեղքից: Պլատոնը (մեր թվարկությունից առաջ երրորդ դար) մեղքն արդեն դիտարկում է զգայականության մեջ: Մեղքը, լավագույն դեղում արգել է՝ հոգևոր գիտելիքների ձեռքբերման ճանադարին, ինֆորմացիոն կազմաբանում, ինչի մասին վկայում է նրա հանրաձայնաչ այլաբանական արահայտությունը՝ հրաշալի Նարցիսը, որը սիրահարվելով գեթի մեջ երևացող սեփական արագուլանքին՝ կախարահանով ձգվում է այդ ուղղությամբ դեղի ձակասագրական անդունդը: Մեր թվարկության երրորդ դարում սոցիկները մեկել էին հոգու և մարմնի հիվանդության վերլուծության հասուկ համակարգ: Սոցիկների կողմից առաջադրված այդ հիվանդաբանական սանդղակում «մեղքին» հակադրված է հինգերորդ տեղը՝ «հիվանդագիտության», «սկարության», «թուլության», «ախտանշանության» հաջորդականությամբ: Մեղքը համարվում է անբուժելի հիվանդություն, որը հնարավոր չէ աղափնել: Մեղքը հոգու հիվանդություն է և այսինքն մարդկային հոգու ներդառնականության խախտում, ինչը նշանակում է, որ մյուս հիվանդությունների համեմատությամբ դա առավել առաջնային է. մեղքը՝ ինքը հանցագործությունն է, բայց մինչ կատարման դարը, հենց առաջացման աղբյուրում այն մարդու արսում է:

Միգուցե Ֆուկոն իր «Մեփուալության

Ա Ն Տ Ի Ֆ Ի զ Ի ս Ի ց դ Ե Պ Ի Պ Ա Լ Դ Ո Ֆ Ի զ Ի Ա (հակաբնականությունից դեղի կեղծ բնականություն)



Ռ Ռ Ի Բ Ե Ն Ի Ե Ն Ա Ն Յ Ա Ն

դում, և որ անբարոյական էությունը, ում համար 18-րդ դարում նոր էր համարվում մեկուսացումը, սեղ չունի 19-րդ դարի հոգեբուժարանում: Նրա տեղը բանում է, և այդ մարդը ողբ է ամենախիստ բանասերության ենթարկվի: Ռուեն-Կոլարը Մադին համարում էր «զառանցանք - արտուլ»՝ սառադող անձնավորություն: 18-րդ դարում արտուլը կադերը համարվում էին խելագարություն, 19-րդ դարում «զառանցանք արահի» համար բանարկում էին, 20-րդ դարում ֆալսիզմն արդեն դայաբար էր սեռական ամենաթողության համար, իսկ 21-րդ դարում Թերես դեռ օրն է մեր դարի մասին ինչ-որ բան ասել:

Ռուլան Բարսը գտնում էր, որ աբխարի փոփոխականության և կատարելության ձգտման մասին նախնական դասկերացումները հանգեցնում են մարդկության Երջված դասկերի ստեղծման, որն է անբարձրությունն ու հավերժական նույնականությունը: Մի խոսքով, ժամանակակից իրականության մեջ իրականությունից դեղի գաղափարախոսությունն անցումը ներկայանում է անցում «հակաբնականությունից» դեղի «կեղծ բնականություն»: Այդ կարգի անցումները մարդկային Երջման աստարեզում, կատարվում են միֆի մասնակցությամբ: Հռեոսրական միջոցների օգտագործմամբ միֆերը ստեղծում են կեղծ բնականության առաջընթացի հնարավոր

Եվան զայաբակղվեց օձի կողմից: Հնարավոր է նաև՝ երբ Ադամն ու Եվան, փորձելով արգելված ողտուղը, վարվեցին: Իսկ եթե դա դասահել է, երբ ծնվել են Աբելն ու Կայե՛նը: Իսկ միգուցե բաժանումը կատարվել է Կայե՛նի կողմից հարագատ եղբոր սղանության հետ: «Կայե՛նը սղանեց Աբելին», հնարավոր է, որ հենց այս նախադասությունը դարձավ անբնական, չնախատեսված բնության ու գոյության կողմից: Ես չեմ խոսում առաջին մարդու արարման մասին այն դասառաջով, որ դա ընդունված է համարել նախատեսված փաստ:

Եվան Ադամից ծնեց երեք տղա, եթե չեմ սխալվում՝ նաև մի աղջիկ: Նրանք սկսեցին բազմանալ ու բազմադասկվել մինչ այն դարը, երբ ծնվեց Նոյը: Երբ Նոյը հարյուր տարեկան էր, իսկ աբխարին այդ ժամանակ մեղքի մեջ, Ասված որոշեց երկիր ողարկել ջրեղեղը: Դա դայանաձևով վերջում էր մի ցանկությամբ՝ վերացնել մեղքը և կրկին հաղթանակ շնորհել նախաստեղծ բնականությանը: Այնուամենայնիվ, այն, ինչ դասահեց հետո, մեզ կրկին ուղղորդեց հակաբնականության: Երբ Նոյի տղանը կանգ առավ Արարտ լեռան կատարին, դեռևս յոթ օր նրանք մնացին տղանում, մինչև ջրերի վերջնական ցամաքելը: Այդ ժամանակ Ասված կանչեց Նոյին և հրամայեց դուրս գալ: Եվ Ասված ասաց, որ այլևս երբեք չի փորձի վե-

դասնություն» գրում գրում է. «Ռասականության դարափոխումն աղբարությունը, ծուլությունը, մեղքն ու խելագարությունը համագործին համարվում և զսնվում էին անգիսակցականության ներքին ոլորտում. աղբարությունն ու գործարկությունը մեծագույն մեկուսացում է, որն իր սարսափ է ներառում բոլոր խելագարներին և մեկուսարանի բոլոր անդամներին, որոնք մեղքին այդքան մոտ զսնվելով՝ կարծես թե անխուսափելիորեն միսվում են մեղսագործության հետ հարաբերակցվելու: Այժմ խելագարությունը մոտենում է սոցիալական անկման ասիճանին, որն աներևույթ ձևով նրա համար և դասճան է հանդիսանում, և օրինակ, և վերջնասահման: Կես դար անց հոգեկան հիվանդությունը կվերածվի այլասերման: Այսուհետև խելագարության գլխավոր և իրական վսանգը գալու է միայն հասարակության հասակից»:

Եվ կրկին մենք վերադառնում ենք հասարակությանը: Այժմ ես դեմ է դասասխանում մի քանի հիմնահարցերի, թե ինչու է ժամանակակից հասարակությունը ճգնաժամի մեջ, ինչու՞ է վերափոխվում կեղծ իրականության, ինչպե՞ս է իրականությունն անհետանում և վերածվում գոյության մեկ այլ ձևի: Արդյո՞ք հուսալի է այն աշխարհը, որին մենք ձգում ենք... Եթե երևակայությունն ընդամենը բնահաճույք է, ապա՞ այդ : Բայց երաժշտության մեջ երևակայությունը համարվում է ազատ ձևի ստեղծագործություն, ամու՞ր է արդյո՞ք այդ ազատությունը. եթե դա սեփական կամքի ինքնաարտահայտման դրսևորում է, ուրեմն՝ այդ: Հակառակ դեպքում արգելվեցնում ու սահմանափակվում են կհանգեցնեն օտարման: Դիմացկուն ու ամու՞ր է արդյո՞ք այն աշխարհը, ուր մենք ձգում ենք

Հակաբնականությունից կեղծ բնականության անցումը հիմնավորված է նոր սեխնությունից անցումով. մարդկության խնդիրը կայանում է նրանում, որ հենց ինքը՝ մարդը, սարսափում է այստեղ կոչված վիրտուալ իրականությունից (Virtual reality technology), որոնք նրան ուղղորդում են կեղծ իրականություն, եթե իհարկե այդպիսի բան ընդհանրապես գոյություն ունի: Բարձր սեխնությունները սարսափելի զենք են մարդկության ձեռքում, որը սակայն մինչ այժմ մենք չենք գիտակցել: Այժմ սոցիալական կարող է անհետանալ: Փոխանակումը կկասարվի սոցիալական հասարակությունից դեղի գերսոցիալական հասարակության: Եվ նոր աշխարհի կերտումը կրկին մարդու ձեռքում է: Եթե Ասված աշխարհը ստեղծել է մարդկության համար, ապա անհայտ է, թե ո՞ւմ համար ենք այժմ մենք արարում այդ աշխարհը: Մենք, ինչպես որ ցանկանում էր Նիցցեն, հենց գերմարդն ենք, որը դասկանում է ֆալսափաստության գերսոցիալական հասարակությանը: Տվյալ դեպքում մեզ միայն մի բան է մնում անել, առգրավել այնքան նոր սարսափներ, որքան կզարգան սոցիալականը: Ժամ Բրոյդարն ասել է, որ այսուհետև ոչինչ իր դասնության վերջին չի հասնում, ոչինչ ի վիճակի չէ փախչելու կեղծարարությունից: Հնարավոր է, որ ժամանակակից աշխարհում «սոցիալականի ճգնաժամը»՝ ամբողջ համակարգի փլուզման նշան է:

Ինչու՞ մեղքը չվերացավ ջրհեղեղի հետ. խնդիրը կենդանի մնացածների գիտակցության մեջ է: Ինչու՞ սոցիալականն ու հասարակությունը չեն կարող անհետանալ. դասասխանը նույն գիտակցության մեջ է: Թեպետ, մարդկությունն ինքը ղեկավարում է գիտակցությունն «առանց գիտակցման»: Մենք գիտեցինք չունենք անցյալի ու աղագայի մասին, կան միայն ենթադրություններ և կանխատեսումներ: Եվ թե ինչ կլինի վաղը՝ ոչ ոքի հայտնի չէ: Մենք մնում ենք մեր երևակայության ու ֆանտաստիկայի հետ: Մնում է միայն կրկին անդրադառնալ միջերին և ստեղծել նորերը: Իսկ կեղծ բնականությունը, եթե հենց մի ինքնաստիճանի միջ չէ, ապա ամեն դեպքում ինչ-որ բան է կեղծարարության ոլորտից:

Թարգմանությունը ուսերենից՝ Հասմիկ Հակոբյանի

ոգեկոչներին,
կախարդներին, ձեռքդ
կամ սիրտդ տեսնողներին
հավատալը մեղք է, աղջիկս,
ասում է Կտակարանը.
անձնավորված իրերի աշխարհում
ես մարդ եմ՝
մեղավոր ավելի քան ծառից
օրորվող Հուլան.
գիշերը մոտենում է, աղջիկս.
Աստված ստեղծեց խավարը,
ազգավներին,
լուսնոտներին.

ես տեղավորվել եմ
իմ երկիր անապատում
ու թեպետ մայրս գիտի՝ անմեղ եմ,
այնուամենայնիվ ես մեղիում եմ՝
ինքնակոչ և դժբախտ...

իմ երկիր անապատում
մի օր մանկությունը մեռավ
կարոտից.
ես մնացի մենակ,
ինչպես թռչուն աներկինք...

Փոքրիկ Իշխանի հոգին
հասանելի է,
մոտ ավելի, քան կենթադրելի,
կհասցնեի լիցքավորել
բջջային սպաստամուկ,
կանչել երկար,
շատ երկար...
Նաղիծածությունից,
իմ անապատից,
երկրից,
հեղձուկ քաղաքից դուրս
Փոքրիկ Իշխանը միամիտ էր,
ինչպես միշտ.

- բարև, տղաս,-
ասաց մայրս,
երբ Փոքրիկ Իշխանը
բացեց դուռը,
ժպտաց ժպիտով,
որից քրիչ է զարնում
հոտն ուրիշ աշխարհի.
մայրս երևի քեզ նայեց
այնպես, ինչպես նայում է
անտեր շներին.

ես քեզ սիրեցի.
մայրս հաց տվեց...

քո գնալուց հետո
մենք դուռը փակեցինք
ամուր,
որովհետև վախենում ենք
երազներից.
իմ երկիր անապատում
ես մնացի մենակ...

Հ.Գ.
մանկությունը դարձավ
Հուլայի կախարհանը.
սարբերից այն կողմ
ժպտաց Փոքրիկ Իշխանը.



Մ Ա Ն Ե Գ Ր Ի Գ Ո Ր Յ Ա Ն

ես ու Հուլան խեղդվեցինք
քաղաքում՝
հեղձուկ ավելի, քան անապատը...

ՆՐԱՆՔ ԿԱՐԴՈՒՄ ԵՆ ՕՇՈ

ուզում եմ կանանց մասին գրել,
որ միայնակ եմ ու կարդում եմ Օշո.

25-ամյա Էռնայի դեմքին
խաղում է նիմֆետուտու
վուլգար, մանկական ժպիտը.
Էռնան մայր է.
ամեն առավոտ արթնանում է
հաստատ համոզմամբ,
որ առավոտները տղամարդկանց հետ
լուսացնող կանայք
պարզունակ են իրենց էությանը,
դատարկ՝ ներաշխարհով.

փոքրիկ Էրոն
տղամարդու վաղախա
լրջությամբ
նայում է մորը,
իրեն ամեն դեպքում համոզում,
որ դայակի ու մոր աչքերը
տարբեր են.

Էռնան ժպտում է,
համառորեն փորձում համոզվել,
որ երջանիկ է,
որ միայնակ, հուսահատ
կին լինելը շատ է սերիալային.

Էռնան գոհ է միայնությունից.
կարդում է Օշո-
տղամարդկանց, սեքսի, սիրո մասին...
աշխատավայրում ժամերը
զսպանակի պես ձգվում են երկար.
Էռնան ինտերնետում է,
նամակ է գրում,
հաց ուտում,
ժպտում,
քայլում...
Էռնան ապրում է

իր կյանքը,
և կարևոր չէ,
որ հղիությունից հետո
ճարակալված մի էգի
մտքով անցնում է
Էռնային որակել... անորակ,
անբնությունից ուռած աչքերով
նայել օրորոցում
ի վերջո քնած մանկիկին,
որ ոչ այլ ինչ է,
եթե ոչ տղամարդու նկատմամբ
իր ցանկությունը
օրենքով հաստատված լինելու
աղյուսը, հետևանք...
նայած, թե ով է արուն.

Էռնային համակարգչի
էկրանից ժպտում է Էրոն,
Էռնան վերցնում է լսափողը.
- Ո՞նց ես, մուկիկս,-
տղան շնչում է
մոր հոտը,
լսափողը փոխանցում դայակին.

հետո մայրը
երկար է պայքարում
իր բացակայության,
դայակի ներկայության հետ

աշխատանքից հետո
Էրոնին խաղալիք է գնում.
տղան քնած է.

դատարկ,
հեղձուկ սենյակում,
ձկան պես համր կինը,
քնած երեխայի ներկայությամբ
ամուսնու հետ սիրով է զբաղվում
և նրա մտքով չի էլ անցնում,
որ Էռնայի նմաններն էլ
կարող են սիրել.
նրանք ուրիշ են.
Էռնան ուրիշ է...
նրանք կարդում են Օշո-
տղամարդկանց, սեքսի, սիրո մասին...

ՈՒՉԱՆՆԱ ՈՍԿԱՆՅԱՆ



Մեր իմ, ասացիր՝ գայլ ես եղել,
ու պաշտեցի ես քեզ
մաշկիդ խզրզված
մազմզուկների չափ,
ու պաշտեցի ես քեզ
ապուպապերիդ տրորած
հողերի երկայնքով
ու հրացանի փողին
հայացքս հառած՝
ռոնացի քեզ նման.
գիշեր էր ու մութ,
ու լույս լսեցի, որ չկամ...
Ասացիր, սեր իմ, գայլ ես եղել,
նայեցի ձեռքերիդ, բարբերիդ,
բարբերիդ, ձեռքերիդ.
գիշեր էր, մութ էր,
ու զգացի, որ մինչ այդ չկայի...
Հեռվում լայիս էր երեխան,
մեր շուրջը հարսանիք էր,
ես ու դու կծկվել էինք
սեղանի տակ.
արի գայլավարի
թաքուն հեռանալը...

Ու պաշտեցի ես քեզ
աշխարհի բոլոր
ճամփաների վրա...

...ու ցրտից չմեռնելու համար
(ես այնքան բարի էի) փաթաթվեցի քեզ,
և հուշեց գիշերը մաքուր արտագրված,
որ ոչ որ չի նկատել
թուլությունս հավիտենական...
...այնքան բարի եմ,
որ կարող եմ մոռանալ քեզ՝ առանց
տանջելու,
իսկ փողոցում թափառում է գարշահոտը
մենակության.
ինչ լավ է, որ տանն եմ.
երենկ հիմար լինեմ ու հավատամ,
որ մյուս ծայրում խոսափողի
դու ես լռում ինձ հետ,
հեքիաթասպան իմ սեր.
կրկին հեքիաթ եմ հորինել զվարճանքիդ
համար.
կհանդիպենք ճիշտ նույն ժամին ու նույն
տեղում.
այնքան բարի եմ, որ չեմ գալու...



Ն Ա Ռ Ա Վ Ա Ր Դ Ա Ն Յ Ա Ն

«Նառան որոշել է ամբողջ կյանքում գրող լինել»,- ասել էր քեռակինս դեռ ամառը ժամանակ: Երևի տխրել էր, որովհետև դպրոցում աշակերտներին գրողների մասին ինքն էր պատմում: Կուզեի նրա հետ նկարված լինել, բայց քանի որ մահվանը մոտ ծերերին ենք համարում, գյուղում ամեն առիթով տատիս հետ եմ նկարվել:

սիրում է իր ուսուցչուհի կնոջը: Ասում էր՝ երբ ուսուցչուհի եմ ասում, ես գրականության ուսուցչուհի եմ պատկերացնում, մնացածները դասատու են: Ես ուսուցչուհուց էլ եմ անցնում, տեսնում եմ՝ տատս, մահը, թուրքը, արահետ ու քեռակինս գրականություն եմ: Երեկոյան լուսավոր սենյակի մեջտեղում մենակ եմ մնում. քեռիս, երեք աղջիկներն ու համեստ մահացած քեռակինս... Ես՝ որպես գրականություն, չեմ խառնվում նրանց ընտանիքի վերջին հանդիպմանն ու հրաժեշտին: Խոսում եմ չորսով՝ հերթով: Քեռակինս մահացած ժպտում է, իրոք ժպտում է: Քեռիս աղջիկներին ասում է՝ ձեր մաման աշխարհի ամենահամեստ մաման ա, վաղը լավ ճամփու կդնեք: Հե-

ԵՍ՝

ԷԼԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

զարմանում էր՝ բա նստել եմ, մի բան չասե՞մ: Հետո քույրերս ասում էին՝ նա է իրենց մոր մահվան պատճառը, որ իրենց մայրը հրեշտակ էր, հայրը ընտանիքի տղամարդ չի եղել: Մայրը մի անգամ փորձել է գնալ գոմում ինքնասպան լինելու, Անուշը լաց է եղել ետևից, քեռակինս վերադարձել է, գրկել աղջկան ու երկար լացել են: Ես ասում եմ՝ երեխեք, լավ, նրանք ծեր են... Էլի եմ ուզում բաներ ասել (քեռակինս վախեցել էր՝ գրող եմ դառնալու): -Մորս տեղը պիտի պապն ու տատը լինեին,- ասում է Անուշն ու փոքր ժամանակվա պես լաց լինում: Հետո էլի ասում է՝ մամաս հղի է եղել, արնահոսել է, տատը ասել է՝ բարձր դիր մեջքիդ տակ, քնի, կանցնի: Նոր ցավակցողներ են գալիս՝ տատս աչքերն է ոլորում՝ տեսնի թոռներից կողքին մարդ չկա, բարձր լացի: Քեռիս էլ համաձայն չի տատիս բարձր լացին: Աղջիկները ցավակցողների ներկայությամբ լաց չեն լինում: Էդտեղ միմյանց ատում էին, միակ հրեշտակը քեռակինս էր: Միշտ տատիցս քքի ու փչացած ատամի հոտ եմ առնում: Ամեն ամառ առավոտները տատս թոռներին հերթով կանգնեցնում էր ու ականջները ստուգում: Ումը կեղտոտ էր, ցուցամատները թքոտում էր, ականջները մաքրում: (Եթե նա կարդա, կհարցնի՝ էդ ե՞րբ եմ ձեր ականջները մաքրել): Գյուղի գերեզմանոցն արտերի մեջ է, քեռուս տունը՝ մոտիկ: Մինչև քեռակինոջս յոթը՝ արտի մեջ մի նեղ արահետ է գոյանում. հո քամին պսակները չի շրջել, հո անասուն չի մտել, հողաթուփը չեն տրորել, ու քեռիս ժամը մեկ գնում-գալիս էր: Նա

կեկում է: Ես՝ էլի գրականություն, լաց եմ լինում: Վաղը բոլոր աղջիկներով գրկում ենք ծաղիկները, քեռակինոջս հենց ետևից գնում: Ծաղիկների գլուխները չենք պոկում, գցում ցեխի մեջ, որ ետևից եկող թափոքը վրայով չանցնի: Անին ասում է՝ մամաս ես ծաղիկների պես էր (Անին էլ է հարցնելու՝ Էդպես բա՞ն եմ ասել): Որոշում եմ՝ հենց գնանք տուն՝ մամայիս ու պապայիս հետ կլուսանկարվեն: Մառախուղը դազող բռնողներին, մեզ շրջապատել է, միայն քեռակինս, մառախուղի մեջ ժպտալով, շորորվելով, գնում է, հասնում: Նրա չաղիկ-ծեր մայրը հողամասը փոցխելիս քփի մեջ թաքնված մեն-մի մանուշակ էր տեսել, քաղել, խոնավ թղթի մեջ փաթաթել ու հիսիս գնացել հիվանդ աղջկա մահճակալի կողքին կանգնել, կեսլաց-կեսծածաղով, ձեռքերը դողդողալով՝ վերջին գարունը նրա ափերի մեջ էր դրել: Գայուշն ասում է. «Մաման մահվան նախորդ օրը երկար խոսել է հետներս, ասել է՝ Նառան գրող կդառնա»: Պիտի Անիից ճշտեմ՝ քեռակինս հաստա՞տ էր պես բան է ասել... Հետո սեղանին դրված բջջայինը, պայուսակը, ժամանակակից իրերը չկարողացան նրա հետ առնչություն ունենալ, մահը հեռացրել էր նրան իմ ժամանակից: Իրերի անտեղությունը մահվանն ինձ էր մոտեցրել: Քեռակինս գնացել-հավասարվել էր հազար տարվա մեռելներից:

Էսան՝ Աննա Դավթյանի «Հետոյի գրություն»-ը հավանելով

Ս Ի Ր Ա Ծ Ի Կ

[բոլոր բառերի փոխարեն չծնված իմ երեխաներին՝ կարոտով և տխրությամբ]

Երբ ես անում եմ իմ այդ պոեզիան, միշտ ստացվում է մի բան երեխաներ սարքելուց առաջ կամ փոխարեն, իսկ ընթացքում և հետո միշտ անձրևում է...

Անձրևում են խանդոտ, թմփլիկ աստվածուհիներս, անմարդ հարևանուհիներս, հավանական հարսներս, մամաներս բոլոր...

- Տիգ-տիգ՝ ակլատիգ, դու նախշուն ես ու թիթիգ...

Ջա՛ն, խավարի մեջ կարելի է սիրել և այլ թաքուն բառեր անել՝ կողքիններին չխանգարելով և անվնաս...

Տես, թե ինչ հարմարեցված ենք մենք իրար...

- Լոր-լոր՝ ցրմփլրոր, դու փափուկ ես ու տըկլոր...

Ինչ որ հիշում եք՝ կպատմե՛ք (ես ինձ ինչ հիշում եմ՝ այստեղ հայեր են ապրում), արա, դո՛ւ, դո՛ւ դո՛ւ, դո՛ւ... հատկապես այդ դո՛ւ, մտապահե՛ք ինձ ներսից, մտապահե՛ք.

Ն ինչ որ հիշում եք իմ մասին՝ կդառնա՛ք:

- Կաթ-կաթ՝ ականատ, սերնաղարտ է- սերմնառատ:

Աղջի, ցուրտը տարել է կարոտելու և տխրելու օրգաններդ, որ մայրանաս, չե՛ս գգում. օրեցօր իմ ու էն բանաբանի միջև բարակում է օգոնի շերտը մի օր միջովդ ինձ կտանի թաքուն՝ անքուն կմնաս, լաց կլինես, կանձրևես-կանձրևես խանդից-խանդից-խանդախտավոր. երազի մեջ:

Երկար ու անմնացորդ լռությունից հետո կասի՝

երբեմն քեզ այնպես եմ կարոտում, որ շուրջս հղիանում եմ բոլոր ծառերն ու չբեր կանայք...

- Ծիկ-ծիկ՝ սիրածիկ, ինձ տուր գինի ու հացիկ, ինձ տուր խնձոր ու ծիծիկ՝ լաց չլինես, լաց-լացիկ:

Հետո... ուրիշ օրեր կգան. մտածեմ՝ ոնց եմ ապրելու:

Ps

Երկիր մոլորակ և հարակից նոսր բնակեցված շրջաններ, բառը մեղկ է աղմկոտ, բառը թաքնվում է այլ բառերը հեջ, բառը մերկ է. բոլոր աստված բաները նրանում բո-բո-բո-ներ են թաքնվում իրար մեջ բառերնայթ և անբարբառ...

Մեռած մարդկանց միջև տեղի ունեցած բոլոր մեռած բառերը միշտ հերոսության մասին են, կարոտի ու տխրության:

Սիրի՛ր նրանց անմնացորդ, չէ՛ որ նրանք վերջին անգամ են ապրում՝ ինչ-որ տեղի է ունենում քեզ հետ:

- Նանիկ-նանիկ՝ ծիրանիկ, բե՛ր ինձ մեկեն հինգ բալիկ:

Ս Ա Ն Ա Կ Ա Ն Ո Ւ Յ Ե Դ Ե Տ Ր Ո Ս Յ Ա Ն

*** Խաղա՛, խաղա՛: Հպարտությունը պապանձվում է իմ աչքերում: Ես ինձ զգում եմ, որ քեզ չգտնեմ. դու հասկանում ես: Խառնաշփոթը ձգզգում է քեզ հստակ մոռանալու ընթացքը: Վախդ մի փոքր տեղիմ է, ցինիզմը՝ անտեղի մշտական: Ես քեզ հենց այնպես սիրեցի: Բայց դու չես ողջվում ճաշակիս հետ ամեն անգամ: Ուստի՛ ես քեզ սիրում եմ ամեն ինչից ցած... Դու ինձ սիրում ես ամեն ինչից վեր:

Քո հեռանալուց ցեխոտ ասֆալտին լավեցին կոկոսները: Պատկերի գետնին ու մենակուրքունից գրկեցի երկինքը. սառն էր: Ոչինչ չուներ ամպերի դեմ, բայց ուզեցի, որ պատառ-պատառ լինեն: Ցեխի մեջ քավալվելով՝ տուն հասա: Բացեցի ծորակը. ջուրը որոշեց չգալ: Համակերպվեցի. սևը միշտ սագել է ինձ, մտածեցի՝ հիմա էլ կսագի, երբ դու բոլորովին հեռու ես: Քահի որ աշխարհում ոչինչ չի կարող ազդել ախորժակիս վրա՝ սառնարանի պարունակությունը դատարկեցի ստամոքսիս մեջ: Քաղցած երակներս լայնացան, լայնացան, ու քիչ էր մնում պայթեին մախամոխից: Հեռակառավարման վահանակի չաշխատելու պատճառով ջարդեցի հեռուստացույցը: Քիչ անց ռադիոյով հաղորդեցին Աֆրիկայում գառանցող սովի ու չգիտեմ որ ծովում խորտակված մավի մասին: Իսկ ինձ միայն հետաքրք-

Ամեն գիշեր անցկացնում եմ ասֆալտին պառկած՝ երկինքը գրկած, որ միշտ սառն է լինում: Քո հեռանալուց հետո անձրև չի գալիս: Սրճարանում ընկերուհուս հետ համարյա կուլ տվեցինք պաղպաղակը. սիրտս ուզեց որոշ ժամանակով հիվանդ ձևանալ, կոկորդոս ոչ մի կերպ չհամաձայնվեց մրսել: Հեռուստացույց մորոգողը գործն ավարտելուց հետո ասաց. -Լավ մայրք ձեր ապրանքը: Բոլորը մայրեցին իմ կողմը: - Լավ,- ասացի: Աշխարհում իրարանցում էր սկսվել. անձրևի բացակայության պատճառով մարդիկ վարակվել էին ագրեսիայով, թալանում էին խանութները, ջարդում մեքենաները, մույնիսկ իրար կո-



ԱՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

աշխատում, ռադիոն ռեֆլեքտրեն մույնն է կրկնում, ամեն ինչ մույնն է, դեռ մի բան էլ ավելի: Հիվանդանալուս փորձերն ապարդյուն են: - Մա՛ն, գնում եմ քնելու: - Չգույշ կլինես, հիմա դրսում ագրեսիվների թիվը շատացել է: Խիղճ ասվածը մվիրում եմ քեզ, ինձ պետք չէ, ինձ նյարդայնաց-

Անձրևից հետո կամ առաջ

րում է աչքերիդ գույնը, երբ ինձանից հեռու ես: Տիկնիկներին լողացնելուց հետո պատկերի գորգին: Քնեցնելու համար, որպես օրորոցային, ռոք երգեցի: Ոնց հասկանում եմ, միայն ես եմ, ում կուպերի արանքում համարձակվում է խցկվել անքնությունը: Անցան օրեր, այդ ընթացքում ես հաշվել սովորեցի. մույնիսկ հաշվում էի, թե օրական քանի բուտերբրոդ եմ ուտում: Անցան ամիսներ, սովորեցի թերթել օրացույցի էջերը: Պարզեցի՝ ամիսն ունի 28-31 օր, օրն ունի քսանչորս ժամ, ժամը՝ վաթսուս րոպե: Ես, ավելի լավ է, հավատայի, որ կատուններն աշխարհի ամենաքնքրուշ արարածներն են: Անցան տարիներ, սովորեցի ապրել առանց քեզ:

կորդ կրծում: Սիրտս ծանրացավ, մույնիսկ գզացի, որ Երկրի կշիռն էլ մեծացավ: Վերջերս անգամ տիկնիկներս էին տարօրինակ դարձել. ցերեկները չէին քնում, լավ չէին ուտում, ստիպված նրանց համար երգում էի սիրածս հնդկական երգը՝ «Եվ կքափվի անձրևը...» Երեկ մեր հարևանը այրեց դիմացինի տունը, դիմացինը մեղադրեց մյուսին, մյուսը հայտնեց, որ ինքը ճաշ չի սիրում: Շարունակ ուզում եմ հիվանդ ձևանալ, մտքիս քաղցկեղը մեծանում, մեծանում, ու... Երեք օրվա փչած փուչիկներն ավելի շուտ կպայթեն: Գիշերները ճանկում եմ չորացած ասֆալտը: Սիրտս շարունակ ծանրանում է: Հեռակառավարման վահանակը լավ է

նում է: Չորացած ասֆալտը անհանգստացնում է մեջքս, ցավեցնում կողերս: Նույն կոկոսները. անձրևը թափվում է: Աշխարհի վերստեղծման յոթերորդ օրն է: Մարդիկ բուժվել են ու վարակվել ժպիտով: Հարևանները մոռացել են վիճելու մասին, ու նրանցից մեկը մույնիսկ սկսել է ճաշ ուտել: Չգիտեմ՝ որքան կմնաս, անկեղծ ասած, կարևոր չէ, հոգ տար անձրևի մասին. այս անգամ ես եմ հեռանում... Տիկնիկներս ցերեկներն էլ չեն քնում. վերջապես մեծացել են...

* * * Երագներից հետո ոչինչ չեմ հիշում: Կորցրել եմ վարդերը երագներից հետո: Կտրել եմ հիշողության մազանոթները, տխրում եմ, որ վաղվա օրվան մայելու եմ պատուհանից ու լռելու եմ ու թերթելու եմ ևս մի երագ, իսկ մախորդը փաթաթելու եմ անձեռոցիկով և պահելու դարակիս մեջ, դրանցից հետո չեմ հիշելու ոչինչ: Դրանից հետո անիծելու եմ վարդերից կախված հիշողությունս:

ՀԻՇԵՑՈՒՄՆԵՐ

Իմ երկրում տխրությունը ոտաբորբի է շրջում, քնում է աղբարկղերի կողքին, արտասվում շներին հետ, ապաշխարում լուսնին, իսկ երգերը բանտարկված են տուփերի մեջ ու ծննդյան անակնկալ մվերներ են հիշեցնում: Իմ ձեռքերում գիշերները լիալուսնից են ծնվում, բանաստեղծներ են ծնվում իմ

ձեռքերում գիշերները, իսկ աստղերը բանտարկված են տուփերի մեջ ու չաշխատող երագանքներ են հիշեցնում: Ոչ որ չգիտի այս համատարած երջանկության պատճառը: Ոչ որ չգիտի՝



ՀԱՅԿ ՍԿՐՏՉՅԱՆ

ինչու է ամբոխը լռում: Լսվում են միայն սրտի անհանգիստ թակոցներ, և դռնակը փակ խրճիթի նման հայրենիք է անվերջ հիշեցնում:

ԱՐՓԻ ԿԱՐԴԱՆՅԱՆ



*** Ասում եմ՝ իրենց հորը նման աղջիկները բախտավոր են լինում: Ինձ հիմա չեն վախեցնում ոչ մութը, ոչ լույսը, Քամին տարուբեր է անում տերևը. Այգում մեկը (մի նորածին) հորանջում է ծառի տակ, մյուս կողմում մի գույգ փորձում է համբուրվել, բայց չգիտի, թե ինչպես. առաջին անգամն է, իսկ ինձ հուզում են միայն տախտակամածի վրա թայրտացող ձկները. գուցե նրանք էլ են ինձ պես աղջիկներ, ու կարող է, չէ՞, պատահել, որ նրանք էլ բախտավոր լինեն:

* * * Ես սիրում եմ ձյունը, երբ նստում է քո ուսերին. հեքիաթը քայլում է քո մեջ քո սև վերարկուով, ես շարունակում եմ հիանալ ու հավատալ քո հեքիաթին... Նայում եմ ավտոբուսի ապակուց, երբ լուրջան մեջ գալիս է ձյունը, շարունակվում քո վերարկուի վրա, և այդ ժամանակ գլուխս դնում եմ ուսիդ, ու բոլոր բառերն անցնում են մտքովս, սակայն նրանցից ոչ մեկը չեմ համարձակվում ասել, որպեսզի չխախտեմ լռությունը ձյան՝ քո վերարկուի ուսերին...

Ա Լ Լ Ա Դ Ա Չ Ա Ր Յ Ա Ն

ԽԵԼԱԳԱՐՆԵՐԻՆ ԱՅԴ ՌՎ ԿԼՍԻ ԱՆՅՈՐԴԸ

Թեկուզ հեռվից,
Թեկուզ կյանքի անհաղորդ եզերքներից՝
Քեզ պիտի սիրեմ,
Ու մրցավազ տարիների երթում
Թող տառապանքիս բույրը
Արբեցնի հոգիս մինչև թմրեցում.
Միևնույն է, ես պիտի սիրեմ քեզ,
Թեկուզ արբած, թեկուզ կիսագիժ:
Թող որ կգտնեմ իմ երջանկությունը
ուրիշ ձեռքերում,
Բայց քո ձեռքերը
միշտ պիտի մնան ամենաթանկը...
Պիտի շարունակեմ գրկել մանուկին այն,
Որն այդպես էլ չծնվեց,
Որ քեզ շարունակ հայր է կոչելու.
Միայն խնդրում եմ ժպտա ինձ այնպես,
Մի վերջին անգամ,
Թեկուզ չարձագանքի մթնոլորտը սեղմ
Իմ ոչ մի բառին.
Խելագարներից այդ ո՞վ կլսի:

Ինչպես անցորդ՝ գալիս ու գնում է օրը,
Իսկ դու եկել ես ամենամեծ ճակատագրի
ճշգրտությամբ,
Ու ընդամենը երկրաչափական
Մի սահմանափակ տարածություն ես թողել
ինձ համար,
Որ տեղավորեմ այնտեղ այն՝ ինչ դու չես:
Չսպանակավոր մի միտք էլ ահա
Խտանում ու նստանում է
Իմ գլխում անվերջ
Անբացատրելի մի բովանդակությամբ,
Որ իմ կարտուն է ներարկել այնտեղ,
Թե մոխրանում է չափից շատ այրվածը.
Իսկ ահա արևը շարունակ այրվում է.
Հակադրության մեջ է մշտնջենության
գաղտնիքը գուցե,
Այն, որ հեռավոր հորիզոնի գրկում
Գիշերը հանդիպման ու բաժանման
Վայրկյաններ է պարզում:
Դու, որ եկել ես ու չես հեռանում,
Դու, որ ձուլվել ես թուլությանս,
Որ ուժ ես դարձել,
Դու չես հեռանա.
Ես հասկացել եմ,
Մշտնջենության գաղտնիքը խորին...



Տ Ա Թ Ե Վ Չ Ա Ն Չ Ա Ն Յ Ա Ն

Մի օր եկավ, գրկեց ու ասաց.
- Գնում եմ Տիրեթ:

Մի օր հետ եկավ, ականջը դրեց
մարմնիս ու ասաց.
- Էս ի՞նչ աղմուկ է:

Յոգայի պարապմունքը
սկսվում էր 7-ին,
խսկ էն ընկերս հաճախ էր երգում.
«Զնից քանկ բան չկա կյանքում...»...
Այսպես են լիստվում ուրվականները,
որ սովորաբար արթնանում են ուշ,
չեն նախաճաշում,
մի քանի ժամ քափառում սենյակում,
մի երկու տող գրում,
մի երկու հատ ծխում,
դառը սուրճ մի կում...
Յոգան էսօր էլ մնաց...

Աչքերս տրորելով՝ ես կարդում եմ
Կաֆկա,
ես տարվում եմ մետամորֆոզներով,
նա ինձ նվիրում է ճապոնական
պոեզիա,
նա ինձ հրավիրում է թեյի,
նրա տնից բուդդիստական գրողափրփիլի
հոտ է գալիս
(ես խենթանում եմ էդ հոտից),
ես ցնցողի տակ բացահայտում եմ,
որ կան չմաքրվող մեղքեր,

նա ցնցողի տակ մտածում է
ինքնամաքրման մասին,
ես գոլորշու մեջ երգում եմ
Էթնոցենտրիկ մի երգ
ու հայելու վրա Արարատ նկարում,
նա մտքով հասնում է Սիդե-նո յամա՝
մեղիտացիայի,
ես սովորում եմ աբսուրդի լոգիկան,
նա համոզում է լոգիկայից դուրս ապրել
ու առհասարակ՝ ապրել...
Նա որտեղ գտնում՝ սպանում է իրեն,
ես ինձ շաղ եմ տալիս պապիս
բոստանում
ու թաքում, շատ թաքում գարնանը
ջրում...
Աչքերս տրորելով՝ ես կարդում եմ
Կաֆկա,
նա առաջարկում է՝
եթե վերափոխվել, ապա Ոչնչի...

Լավ, համոզեցիր:
Գիշերը,
երբ բոլոր գոյաձև մարմինները
դառնում են անդեմ զանգված,
ես նախաարարչական քառսի մեջ
գտնում եմ ականջս,
զգուշորեն մոտեցնում մարմնիս,
ես խլանում եմ աղմուկից,
ներսից խեղդում է ամբոխը,
ու ինձ հրմշտելով՝
գլխապատառ վագում եմ քո տուն՝
թեյ խմելու...

Ճահճացող անձրևի
կաթիլներն անկարող են
միայնությունս փարատել սիրահարների
պուրակում.
այնտեղ երջանկությունը հարատև է,
խոստովանություններն այնքան հարատև,
որ չեն հասցնում գիտակցել
բացակայությունը:
Կարոտիս թացությունն
այնքան անսպառ է,
որ չեմ հասցնում չորացնել դատարկ
նստարանները:
Սպասումն այնքան անժամկետ է,
որ թվում է՝ իմ աչքերում
հենց այսպես կանաչ էլ կմնա մեր սիրո
մոլորակը:

Չհասցրի թաքցնել քեզ թախծիս
մահճակալում.



ԱՆԻ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

անկողինս գունաթափված է,
կարկատված վերմակիս տակ ցուրտն է
մրափել.
գիշերային պայքար է.
ինձնից գողացան վերջին հույսս:
Ես շտապում եմ հավաքել իրերդ,
որ չզգաս անձրևի դողը.
չհասցրի ըմբռնել քեզ այսօր էլ.
Ժամասլաքն արշալույս է գոռում:

Ա Ն Ի Դ Ա Դ Յ Ա Ն

Բացի՛ր դուռը.
ես հեռվից եմ եկել:
Մի՛ կողպիր աչքերդ,
դու ինձ անգիր գիտես:
Ես հոգնել եմ
ջրերի մեջ թավալ գալուց...
Ընդունիր ինձ
վերջին գարնան պես:

Մի քանի վայրկյան
քո գրկում ապրեմ,
ինչպես երկինքը
գրկում արևի.
ուզում եմ տեսնել՝
ցավին նախորդող
երջանկությունը

այս վերջին անգամ
որքան կտևի...

Հոգիս լողում է ուղիղ մաշկիս տակ,
Ու ծարավել եմ քո շլինելուց,
Որո՞նում եմ ես ապաստան մի տաք,
Բայց արևները մաշվել են վաղուց...
Ու ավազի պես թափվել են գլխիս,
Ես մեր Սևանա երազն եմ հիշում:
Այն ալիքները անցյալի փեշից
Թափվում են դեպի օրերիս աշուն...
Հոգիս պայթում է ուղիղ մաշկիս տակ,
Ու ցնցվում եմ ես քո շլինելուց:
Անցյալից պոկված երկու գույգ ալիք
Փորձում են դառնալ չհավվող սառույց:



Ա Ե Ո Տ Ա Բ Ը Ա Շ Ա Մ Յ Ա Ն


Երբ տերևները փաթաթվում են ծնկներիդ,
կամուրջներն ընկնում են ոտքիդ տակ,
թռչուններից մնում են ծեր ագռավներն ու
կաշաղակները,
այդժամ աչքերիդ մեջ երկինք է,
ուր քամիները հայացքդ պտտում են
շուրջս
ու ինձ մեխում ամպերից այն կողմ,
առնվազն քեզանից հեռու,
ես ընկնում եմ փշալարերի ու ճահիճների
համաստեղություն,
ուր քրջված այտերս կարոտում եմ
զգոնությունդ թուլացնող հպումները,
ու երբ ափիս կարկատանների մեջ դուռ ես
փնտրում,
ինձ թվում է, որ դու այն լույսն ես,
որը ծնվել է տերևաթափ քաղաքում՝
թևաթափ մեծությունս լուսավորելու
համար:

Լռությունը կոտրում է շնչառությունս,
ու փորձում եմ մտքերս հավաքել:
Մոտենում եմ պատուհանին,
աչքերս լցվում են աստղերով,
որից արթնանում ես ու հենվում
վարագույրին,
ապա շոշափում ես սրտիս զարկերը
ու մոլորվում երակներիս մեջ:
Գիտեմ, որ ավելորդ է շքեղությունն առանց
քեզ,
բայց դու հատում ես հասարակածը,
երբ կասկածները ծամում են նյարդերս.
քեզ գրավում են ծիածանի գույները,
ինձ՝ մոլորեցնում,
երբ ճամփաները սեղմում ես ափիդ մեջ
և ներկան վանում քեզանից:

Ն Ա Ը Ե Վ Գ Ա Ս Դ Ա Ը Յ Ա Ն

Քայլում եմ՝ չնկատելով շարժը,
որն ապագայիս կադրերն է
բացահայտում:
Հիշում եմ իմ նոր հույսի
րոպեները ցնդաբերության:
Նա խոստացավ ինձ,
որ կժպտա մահաճակիս,
երբ հիշատակը կփոխի
հայացքը ներկայիս՝
ինձ դիտապաստ ներկայիս,
որը անցյալում կդառնա արքա:

Կատարված անցյալիցս
անկատար ներկաս
արտագրում է պահեր հիշարժան:
Ճակատագրիս դատավոր, խոսի՛ր,
դեռ ժամանակը լռելու կգա,
և կարտահայտես
քո ցանկությունը համը մնալու
ու կհիշես, թե գարնան գույներով
ոնց էիր պատկերում
երջանկությունդ:
Վաղուց սպառվել են բոլոր
երազներս,
բայց սեղանի շուրջ նստած է նորից
անկատար ներկաս -
կատարված անցյալիցս
հիշարժան պահեր է արտագրում:



Վերջերս աշխարհին հայտնի քաղաքների թվին ավելացավ ևս մեկը՝ իր հինգերորդ վերահիմնադրմամբ: Այդ ինքնատիպ ուտոպիան բանաստեղծ Կարեն Անտաշյանի «Անտաշյան» ժողովածուն է: Հեղինակային բնորոշմամբ՝ 78% պոեզիա պարունակող այդ քաղաք ոտք դնելու համար նախառաջ հարկավոր է ծանոթանալ հեղինակի՝ գրքին կցած տուրիստական ուղեցույցին, որի մեջ կարելի է գտնել Անտաշյանի բանակին, որն ընդհանրական է գրքի կառուցվածքային բոլոր մասերի համար: Գիրքը բաղկացած է չորս մասերից՝ «Բերքի տուն», «Ջրո», «Ազոավաբար» և «Պոեզիաթերապիա»: Առաջին հայացքից չկապակցված բաժինները, սակայն, ոչ միայն միմյանց տրամաբանական շարունակությունն են, այլև անքակտելի ներդաշնակություն, որտեղ հավասարաչափ հոսում է միևնույն գետը՝ կյանքի արարման և ինքնամաքման խորհրդով: Առաջադրել, գիրքը կուռ կառույց ունի և բանաստեղծությունները շարքից-շարք փոխլրացնելով միմյանց, մի ամուր շրթա են հյուսում, որի օղակներից յուրաքանչյուրն իր գործառույթն ու նշանակությունն ունի: Մասերն հաճախ միմյանց լրացնում են ոչ միայն ասելիքով, ինչպես օրինակ «Ջրո» շարքն ամբողջությամբ, այլև անմիջականորեն տեքստային հատվածներով. հաջորդի առաջին տողը կամ հենց վերնագիրը դառնում է նախորդ բանաստեղծության շարունակությունը: Այսպես՝ «Չուշանաս, էլի»-ն ավարտվում է «Գե արի, մոտս արի...» տողով, իսկ «Տանգո» բանաստեղծությունը սկսվում է «Չէ՛, չէ՛, սպասիր» տողով և շարունակության մեջ զարգացում ապրում այնտեղից, որտեղից ավարտվել էր նախորդը: Նույն տրամաբանությանն են ենթարկված «Գլխասպտույտ»-ն ու «Ծննդոց»-ը, «Արծվաբիթ գրիպ», «Տաք պահի, կանցնի», «Սպասում», «Կանգառ» և այլ բանաստեղծություններ: Այսինքն՝ գրքի խորհվածքը մի ամբողջական համակարգ է, որը շրջանաձև զարգացում ունի. ոչ մի բանաստեղծություն ինքնանպատակ չէ: Անտաշյան ոտք դնելուն պես խորհրդավոր նախաճաշ է մատուցվում, ամբողջ ընթացքում մշակվում և նախապատրաստվում են իբրև անտաշյանցի, և վերջում, երբ դրան արդեն պատրաստ են, քեզ է մատուցվում Անտաշյանում մնալու նախապայմանը.

Անտաշյանում երկար չես ձգի. արտասովոր աշխարհի աղմուկը: Մերկությունը պարտադիր պայման է սերը (Նրան) վայելելու- արտասովոր սկսիր... մերկանալ, որ պոեզիան մենակ չմոխիր մինչ ժպտալու ժամանակը գա:

Այստեղ ավարտվում է օրը, բացվում նորը, և կրկին վերադառնում են սկզբին՝ «Խորհրդավոր նախաճաշ»-ին, որովհետև միայն վերջին հասնելով կարող են հասկանալ սկիզբը՝ կյանքի շրջապատույթի և սննդային շրթային պես, որոնք միշտ կրկնվում են, բայց չեն նույնանում: Նույն շրթայան ռեակցիայի ֆենոմենը կիրառված է նաև սիմվոլների պարագայում: Գրքում մեծ տեղ է գրավում 5 թվի խորհրդող. «...խաղողօրհինգից 5 օր առաջ...», «...հասնելով կենսականորեն անհրաժեշտին ու անցնում ևս 5 մատնաչափ...», «...հատկապես գա-

լուցը 5 թույն առաջ...», «...ցուցամատը դնում 55-րդ էջի նկարին...», «...գարունը 50 դրամանոց դեղին ծաղիկների փունջ է...», և այլն: 5 թվի կիրարկության առաջին խորհրդողը՝ կենսաբանականն է, իսկ մի գիրք, որը մարդուն հիշեցնում է «իր մեջ եղած միլիոնավոր տարիների կենսաբանական հիշողության» մասին, չէր կարող չըջանցել 5-ը: Նախ, մարդն օժտված է 5 զգայարաններով, որոնցով ընկալում է կյանքը, որոնցով մեղքեր է գործում և ոչ միայն: Մարդու գլխուղեղը կազմված է 5 ուղեղներից, կիսագնդերի մակերևույթը կազմված է գորշ նյութի 5 մ հաստության շերտից, մարդու վերջույթներն օժտված են 5 մատներով և այլն: Հեղինակը 5-ի հարակրկությունը գրքում պայմանավորում է ընդամենը նրանով, որ ինքն այդ թիվը շատ է սիրում, ու որ իր կյանքում ինչ-որ հնգաստիճան պարբերականություն կա, այնուամենայնիվ, մեր կարծիքով, 5 թվի բազմազան կիրառությունները առնչվում են գրքի հիմնական՝ ջրի արարիչ սկզբի խորհրդի հետ: Վարդան Այգեկցիին ասում է. «Եվ այսպես բարի է հինգ թիվը, ինչպես արարչութեան հինգերորդ օրը, որի ընթացքում Աստուծոյ հրամանով ստեղծուեցին ծովի անբանակ ձկներն ու մեծամեծ կետերը: Եվ նոյն ծովից անթի ու անհամար ձկներ թռան ու բարձրացան երկինք ու զարդարեցին այն» («Խրատներ»): Ուշագրավ է, որ բանաստեղծություններից մեկում բանաստեղծն իրեն անվանում է «...թռչնածկների մասին լեզուներ հորհրոն...»: Բավական տարածված են ջրի ու արարման հետ կապվող հեթանոսական աստվածությունների սիմվոլները՝ Աստղիկը, Անահիտը և այլն: Այս սիմվոլները, գրքի տարածքում խորհրդանշում են «կենսական էներգիայի արական,

ականջից ներս (տպավորիչ երևալու համար) խորհրդավոր և ծորուն -ԴՈՒՒ,ԴՈՒ,ԴՈՒ՛... լավագույնն իմ արարումներից, առաջիններից մեկի արյունակիցն ու վերջիններից մեկի նախապայք: Հերիք է մահը բշտամի սարքես կյանի համար:

Լրացավ քո ժամանակը, բայց ես դեռ հո կա՞մ...

Սակայն, եթե լրանում է մարդու կյանքի ժամանակը, ջուրը միշտ շրջանառության մեջ է ու դրանով էլ հավերժ՝ անընդհատ արարման ընթացքում: Արարումը տարբեր արտահայտություններ է ստանում, գուգահեռվում բերքահավաքով ու բերքի տոնով: «Ջրո» շարքն արդեն կյանքի հաջորդ փուլն է, որտեղ կյանքը վերածվում է խաղի: Մի խաղ, որտեղ կարևորն ընթացքն է, որը «միշտ հնարավոր է սկսել սկզբից», որը «ցրում է իրական վերջի մասին ծանր մտքերը»: Շարքը մեկնարկվում է «Սկզբնախաղ»-ով, և հետո խաղարկվում են 5 կոմբինացիաներ: Տուն-տունիկ-մանկակալան խաղեր(«Երեխաները խաղում են, որովհետև մեզ այդպես է թվում») պատերազմ շղթայով զարգանում է այս շարքը.

Խաղը սիրում է կրկնել. «Տեղը ճանաչիր: Ո՞վ ես դու... հաղթանակա՞ծ... պարտվո՞ղ, ո՞րն է քո պատերազմը, գտիր քեզ, շոշափիր քեզ, սիրիր քեզ, ո՞րն է քո շափումը, աստղերից այն կո՞ղմ, թե՞ Արևից այս կողմ, ընտանիքի հայրի՞ն ես, թե՞ հայրենիքի գիվո՞ր,

ՆՈՐ ԲԱՂԱՔԻ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆԸ

իզական և մայրական ձևերը, նրանց փոխազդեցությունը միմյանց և նախաստեղծ ջրի հետ»: «Կյանքը շարունակվելու սովորություն ունի» և «շարունակվելու համար կյանքը դիմում է դերասանական էժան հնարքների» ընդհանրացմամբ հեղինակը հարատևության գաղափարն է առաջ քաշում. հարատև է բնությունը, հարատև է կյանքը: Մա նկատելի է անգամ եղանակային, օրացուցային պատկերներում. «...այստեղից արագ անցե՞ք՝ փետրվար է, ինձ թվում է՝ գարունը 3 ամիս շուտ սկսվեց...», «...մի անգամ Անտաշյանի փետրվարում մենք համընկանք... էնորֆինային համբույրով...», «...ամեն ինչ սկսվեց հրնթացս նոյեմբերի, ես, նա և փետրվարը...», «...նորից գարուն կլինի Անտաշյանում, ո՞ր ես շտապում...», «...հիմա ամեն տեղ էլ աշուն է, դեկտեմբերի կիսամերկ ծառերը...» և այլն: Հետաքրքրական է, որ բանաստեղծություններում ամառը քիչ է հանդիպում, այն էլ՝ առավելապես հիշողությունների ու պատկերացումները ձևով: Եղանակային պատկերների հաջորդումները կրկին կապվում են բնության շրջանառության և գուգահեռվում մեռնող և հարություն առնող բնության առասպելներին: Արարման ենթատեքստում էական են դառնում Աստծո հետ բանաստեղծի հարաբերությունները: Բանաստեղծ-հերոսն հենց սկզբից մտերիմ է Աստծո հետ, նրա հետ զրույցի է բռնվում, վիճում, բողոքում և այլն.

Ինձ էլի տեղ դրած՝ Քո արարած գիշերից փախչում եմ Քո արարած առավոտը, ես Քեզնից փախչում եմ Քեզ մոտ ու քեզ օրհնելով քֆրտում եմ Քեզ: Արյունդ, որ Մերն է, ես խմեցի ցմբուր, ազահորեն, մի շնչում ու թվաց ինձ մի պահ, որ ես դարձել եմ ԴՈՒ. էս ինչ լավ է հնչում. «ԵՍ ԴՆՐՉԵԼ ԵՄ ԴՈՒ», և ես եմ Մերը... գոյական:

Կամ՝ Հայր, եկել է ժամանակը, ասա՛՛ նրանց այնպես, ինչպես դու ես սիրում ասել. փողոցային աղմուկի մեջ տաք շշուկով



Գ Ո Ն Ա Ր Ա Ը Ե Լ Յ Ա Ն

ցեղապե՞տ ես, թե՞ հերոս, պոե՞տ ես, թե՞ դիտչի, թագավո՞ր ես, թե՞ ամեն դեպքում...»: Պատերազմը քո ժառանգությունն է և քո կտակը Ի սկզբանե և ի վերջո:

Արարման ու խաղի միջև էլ սկսվում է «ազգային հոգեվերլուծության սեանսը»՝ «Ազոավաբար» խոսում վերնագրով: Հեղինակն անդրադառնում է ազգային կարծրատիպ-կեղտաջրերին, ժամանակավոր փակուղի մտնում, սակայն այնտեղից դուրս գալիս «Քարանձավաբանական ծովաստծու» միջոցով.

Ես հիշում եմ քո այն երազը, որի անունը ջրաշուշան դրեցինք, և դեռ երկնագույն էին այդ ժամանակ ինձ պես ծովագաղափները:

Չորրորդ շարքի՝ «Պոեզիաթերապիայի»-ի առաջին բանաստեղծությունները հաշվետվության ու եզրահանգումների բնույթ ունեն: Արդեն աներկազակաձից, ապրվածից ծնված խոհ, crisis, դառը, հեզմակալան ինքնամոխիսրում, սպանող սպասում, որը մաշվում է կյանքի կանգառներում ու այս ամենից, փաստորեն,

կյանքը միայն մոտավորապես է ստացվում՝ մոտավոր, ծուռուտիկ հաշվարկներով.

Լսիր, բոլորին սիրելն ամենամեծ մեղքն է, եթե Քրիստոսը չես... Իմ ճերմակավոր ընկեր, մի օր, երբ քեզ ներեն այս անդունդի հատակին ինձ էլ՝ պարտված, կեղտոտ «ճ» կարգի կրտսեր սերժանտիս սիրած լինելուդ համար ու մի օր, երբ դու ներես ինձ Աստծուն հայոյելիս քեզ տեսած լինելուդ համար, կնստենք, կխմենք իսկականից, մարդավարի, կհարբենք իսկականից (իմ հաշվին) և միմյանց ու Աստծուն խաբած չլինելու համար լաց կլինենք իսկականից մեր էս մոտավորապես ապրած ժամանակի... կարոտից:

Ու կյանքի անպատում մարդը մեռնակ է մնում Աստծո հետ՝ իրեն փնտրելով Աստծո մեջ, իրեն փնտրելով իր մեջ, ու այդ եսակենտրոնացումից, բնականաբար, մեղիտացիայի հոտ է գալիս, որն էլ թերևս պոեզիայի յուրահատուկ ընկալում է բերում.

Պոեզիան շինարարության 5-րդ հարկից քո գլխին ընկած քար է:

Անտաշյանը բավական դետալիզացված է: Այստեղ ամեն բան իր հոտն ու գույնն ունի. «...Ախ դու, վարդագույն կրունկներով իմ սպիտակ...», «...կանաչ շարունակություն...»,

«...անսովոր հոտ՝ սովորական դարձած ստեղծից...» և այլն: Այս հոտերից ու գույներից ծնվում են որոշակի տրամադրություններ, չասված խոսքեր: Գիրքը ոճական բազում նորություններ է բերում, սակայն հաճախ շատ են նաև չիմանափորված և այս կամ այն բանաստեղծությանը աններդաշնակ պատկերները: Ուշագրավ են գրական-խոսակցական անցումները, որոնք երբեմն այնքան նուրբ են, որ յուրահատուկ ոճավորման արժեք են ստանում: Ոճի նուրբ գզացողությունը տեսանելի է հատկապես «Բերքի տուն» շարքի բանաստեղծություններում: Գրքի տրամադրությունների ընդհանրականության հետևանքով հաճախ նույնափունջ պատկերները չեն փոփոխություններով կրկնվում են, ինչը թեև կարող է մի կողմից ձանձրացնել, իսկ մյուս կողմից խտացնել ասելիքը: Ամեն դեպքում ընդհանրացնելով կարելի է արձանագրել, որ գիրքը հաջողված է և ընդհանրապես հետաքրքիր է լինել մի քաղաքում, ուր «...ձմերուկը կարող է արտասովոր», «ուր մարդիկ կարող են շնչել միմյանց» և «իրար անձրև ասել, երբ ծարավ են լինում. սցենարով է այդպես...»:

Ա Ր Ա Ս Դ Ա Չ Յ Ա Ն



Ներողություն, Բրունո

Ընթերցել Բրունո Շույց՝ նշանակում է առանց մտածելու թռչել բաց պատուհանից, վերապրել ու վերանակվել, ներարկվել, քարանալ նախադասությունների ստվերներում, ֆանտաստագորիական զգացողությունների աննկարագրելի շտրիխներում, շունչդ պահած թափառել «Կոկորդիլոսների փողոցով»... հետո ծխախոտ վառել կամ անձայն մտնել խոհանոց՝ սուրճ պատրաստել կամ թեյ՝ տաք, պինդ թեյ և հաշվել սենյակում մենակության մեջ արձագանքվող նրա տխուր քայլերը... Ահա սեղանի առջև նստած՝ դանդաղ, չափազանց դանդաղ նա թարգմանում է (հանճարները դանդաղ են թարգմանում) Կաֆկայի «Դատավարությունը» և տղազրում՝ սեփական մահը... «Կհասնի՞ արդյոք պատմվածքս Թոմաս Մանին»... ընկճված սպասումով նա վերցնում է ածուխն ու թուղթը և պատկերում հոր հայացքում թռչնի երազանքը...

վերժության ներսում, իսկ ապագայի բացակայությունը փոխարինում է տարածությանը...
Ընթերցանությունը երբեք չի ավարտվում, կրկին թերթում ես էջերը՝ զարմանահրաշ ապրումներից կարկամած փորձում կիսել երջանկությունդ, սակայն միակ էլքը վերադարձն է՝ վերադարձ Բրունոյի տիեզերական անվերջություն՝ մելամաղձոտ, բայց և ցավեցնելու չափ հաճելի...
«Ես մարդկայնորեն վախենում եմ մենակությունից», գրում է իր նամակներից մեկում Շույցը, սակայն մինչև վերջ ապրում է այդ մարդկային հիվանդության ողջ փուլերը... «Շույցը իմ Աստվածն է», ասել է Դանիլո Կիշը Ջոն Ափոլայքին... Պետք չէր լինել Աստված, չէ՞ որ մարդիկ սուր հոտառություն ունեն. նրանք միշտ սպանում են Աստվածներին, չնայած Աստվածներ չեն ընտրվում, նրանց ընտրում են...
Բրունոյի պատմությունները կարդալուց հետո դժվար է որևէ բան գրել. այսպիսի գրականությունն անքննելի է, քանի որ այն պարզապես անբացատրելի է և փակելով գիրքը դու միշտ տեսնում ես փողոցը, նացիստ-մարդասպանի ատրճանակից արձակված երկու փամփուշտները, անկման ակնթարթը, այտի և ասֆալտի հանդիպումը... մնում է բառը. բառը՝ ոչ մի կերպ չառնչվող եղեռնագործության, դիկտատուրայի, բռնության հետ, այն ուղղակի ընթերցողի շնորհակալության խոնարհումն է, ով ասում է.
Ներողություն, Բրունո...

ԱՇՈՒՆ

Չմոռանա դեմքերը, լսում ես, տերև բռնողների... Մարդիկ հիշում են իրենց տան տեղը, փողոցի տեղը, իսկ ընդհանրապես շատ բան հիշում են: Բոլոր բաներին դեմքով ճանաչում են: Նախորդ դեմքերից մնում են դալաններ, դալանների տակ՝ սպիտակ բեղ-մորուքով գունավոր թելեր վաճառող մարդիկ կիսակոնացած: Կրկնվող կոշակակարների դալաններում մարդիկ հիշում են իրենց հին շենքերը: Կիսատ ճանապարհին մարդիկ շարունակ կրկնում են վերջը ինչ-որ կրկնեցի, ինչ-որ տողեր են անգիր անում... Չմոռանա կրկնել բանաստեղծությանդ սկիզբը վերջում, որ հիշեն, և ուրեմն, չմոռանա դեմքերը տերև բռնողների...

Լռությունը փարատել պետք է հին բառերի վրայով անցնելիս: Նրանք բռնեցին բառերն ու սկսեցին թափահարել, թափահարել և բլավեցին, թե բոլորը գոհ են ու երջանիկ, և «ու» տառը կոկորդիներում ձգվեց: Մեխանիկորեն բարձրացրին ձայնը, բայց ձայնը ոչ մի կապ չունեց,

ու չփոխվեց ոչինչ: Եվ նրանք ծիծաղեցին, ծիծաղեցին ու ծափ տվին նորին կամ մնացին այնպես, ինչպես որ էին, կամ թափ տվին ուսերը նրանք բոլորը, ովքեր այդպես էլ մոլորված մնացին ու չբացեցին գորգերը, ովքեր մնացին տանը ու ստիպված պետք է պարծենային, ովքեր դարձել էին սառը-սառը, ովքեր վախենում էին ծիծաղելուց, ովքեր իրար մասին լավ բաներ էին երազել... Նրանք բոլորը հին բառերի վրայով անցնելիս...

Երբ մոլորակները ծիրից դուրս են գալիս ու դառնում են թափառող մոլորակ, տան բոլոր քառակուսիները սկսում են հրել. կլորները գլորվում են, մանուսի ատամների արանքից կանաչ ծիլ է ընկնում, փորձում ես հավաքել բոլոր սիրուն բաները, շրջանցել արտիզ զարկերը, անընդհատ թեքվել՝ սև ուրվականների չբախվելու համար, նայել հետապնդող հայացքների (երբեք չես իմանա՝ թեզ ով կճանաչի), պարբերաբար ընդմիջվող հայելիներին նայել, չորացնել լոգարանի պատերին փայլող ջուրը, որ կլոր կաթիլներով

գլորվում է, բռնել վայր ընկնող նարինջները, սրբել ճակատը, բռնել բազրիքը...

Մինչ այդ՝ այն ընթացքում, երբ նարինջն ապրում էր իր սեփական կյանքով, փափկեցնող կրեմը կերտում էր ձեռքերս...

Չընկնես ժամանակի հետևից, չիուսաս, հրաշքի չսպասես, չնստես կոճղին, գաթան չուտես...

...Ընդգրկվեց-մնաց կես ճամփին...

Ս Ա Ր Ի Ա Ս Կ Ա Ր Ա Դ Ե Տ Յ Ա Ն



ԱՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼՈՍՏԻ ՎՐԱ ԱՊՐՈՂ ՏՂԱՆԵՐԻՆ

Տղաները մեծանում են. մի անգամ գլորվեցին ու ընկան ափիս մեջ, լուսինը քնեց, ծիածան չկար... Լուսնի վրա ապրող բոբիկ տղաները երազում են թիթեռների մասին, իսկ թիթեռներն ապրում են քառասուն տարի, ջազ են լսում ու կարող են անցնել ծիածանի տակով... Քեզ տեսնելիս երկինքն էլ է մերկանում... Մոռանում է, որ ինքը թիթեռ է, իսկ հիմա ձմեռ է արդեն, շնչում է դանդաղ ու ամեն գիշեր ատամները սեղմած ոռնում է...

Մխաված գայլերը հիշել են իրենց նախահոր աղոթքը, որ լուսինն ու գայլերը քույրեր են... Կնճռոտած լուսնի շուրթերը դեռ կարմիր են, իսկ մոխրագույն մազերը լուսնագույն... Կարոտում է Լուսինը...

Տղաները մեծանում են ու էլ չեն երազում ոչ թիթեռների, ոչ ափերի մեջ գլորվելու մասին, տղաները մեծանում են ու ապրում քառասուն տարի... Մեկ-մեկ հիշում են գայլերը իրենց սպասող քրոջը, ու նորից ոռնոց՝ իրենց նախահոր հիշատակին... Խեղճ թիթեռներ, որ սպասում են լուսնի վրա ապրող բոբիկ տղաներին... Խեղճ թիթեռներ... Իսկ տղաները մեծանում են... Ես 108 համարի թիթեռն եմ, իմ մասին գրել են Կարմիր գրքում, փնտրում են այն տղաներին, որոնք չեն մեծանում, բայց ապրում են քառասուն տարի. ես նրանց համար դառնում եմ ծիածան ու սպասող քույր: Ուսերիս դաջել եմ իմ թիվը. ոչնչացման եզրին եմ... Կարմիր գրքից գոնե ինձ մի ջնջիր... Խեղճ թիթեռներ, որ դեռ սպասում են...

Լրատվական գործունեություն իրականացնող «Սատիրիկոն» ՍՊԸ: Վեբ-կայքի 03Ա063750, տրված 26.02.04: Տպագրակ 1000, ծավալը՝ տպ. 3 մամուլ: 375019 Երևան 19, Մարշալ Բաղրամյան պող.3, հեռ. 56 21 90, email: greteri@rambler.ru: Խմբագիր և համարի պատասխանատու՝ Գուրգեն Խանջյան: Խմբագրական խորհուրդ՝ Աշոտ Գաբրիելյան, Արթուրյան Կարինե, Արթուրյան Կարինե, Վահագն Մարտիրոսյան: Համարի լուսանկարները՝ Անահիտ Հայրապետյան: Չեփադրումը՝ Նառա Վարդանյան: Տպագրված է ԱՉ «Արարիկ Մարկոսյան» տպագրանում: Լույս է տեսնում երկու ամիսը մեկ անգամ: Նյութերն ընդունվում են մեքենագիր, չեն գրախոսվում և չեն վերադարձվում: Արտատպության դեպքում հղումը «ԳՐԵՑԵՐԹ»-ին պարտադիր է: